

ՀՀ Արարվիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների  
ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին

Դիմումատուներ՝

1. Անի Հակոբի Բոշյան  
Հասցե՝ ք. Վանաձոր Արովյան 28  
2. Հակոբ Բոշյան

Հասցե՝ ք. Վանաձոր Արովյան 28  
Ներկայացուցիչներ՝

1. Արայիկ Միքայելի Զայսյան  
2. Արթուր Ալբերտի Սաքոնց

Ծանուցման հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր Տիրան Մեծի 59

Պատասխանողներ՝

1. ՀՀ Հատուկ քննչական ծառայություն  
ք. Երևան, Վաղարշակավարշյան 13 ա  
2. ՀՀ գլխավոր դատախազություն  
ք. Երևան, Վազգեն Սարգսյան փ. 5

**ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ**

(ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Ն. Բարսեղյանի 17.04.2015թ. քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու պահանջի մասին)

**1. Դեպքի նկարագրություն.**

1.1. 2014թ. նոյեմբերի 11-ին, երբ Անի Բոշյանն իր անձնական գործերով գտնվել է Երևան քաղաքում, իրեն զանգահարել է մայրը՝ Բավական Խաչատրյանը և հայտնել է, որ ոստիկանության Տարոնի բաժնի աշխատակիցները գնացել են իրենց բնակարան, կատարում են խուզարկություն, այնուհետև վերջիններս Ա. Բոշյանի հորը՝ Հակոբ Բոշյանին տարել են ոստիկանություն (որտեղ պահել են մինչև ժամը 17:00-ն), ապա Բ. Խաչատրյանը պահանջել է, որ աղջիկն անմիջապես վերադառնա Վանաձոր:

Նույն օրը, ժամը 17:00-ի սահմաններում, երբ Ա. Բոշյանն արդեն տանն է եղել, ընտանիքի անդամների՝ մոր և հոր հետ միասին գնացել են ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժին, որտեղից Բ. Խաչատրյանը զանգահարել է իր դասընկեր՝ Ա. Դերձյանին (ով աշխատում է ոստիկանությունում) և հայտնել է, որ իրենք գտնվում են ոստիկանության բակում և հարցրել է, թե ում մոտ պետք է բարձրանան: Ա. Դերձյանը պատասխանելով հարցին հայտնել է, որ գնացեք տուն, տանը սպասեք, ինքը կասի երբ

գան: Այսուհետև, վերջիններս գնացել են իրենց տուն (ք. Վանաձոր, Աբովյան 28): Նույն օրը, 18:00-ի սահմաններում նրանց տուն են գնացել ոստիկանության երկու աշխատակիցներ և Ա. Բոշյանին տարել են ոստիկանության Տարոնի բաժին, մայրը նույնպես նստել է ոստիկանների ավտոմեքենան, իսկ հայրը ոստիկանություն է գնացել իր մեքենայով:

1.2. Ոստիկանության բաժնում ոստիկանները կազմել են ինչ-որ փաստաթղթեր, որոնք Ա. Բոշյանը ստորագրել է, որից հետո իրեն տարել են բաժնի պետի տեղակալ Վ. Թորոսյանի աշխատասենյակ, որտեղ վերջինս իր հասցեին անպարկեցն արտահայտություններ է արել և մեղադրել պոռնկազրական նյութեր տարածելու մեջ, որին ի պատասխան ինքն ասել է, որ նման արարք չի կատարել, սակայն իրեն ոչ ոք չի լսել՝ հակառակը շարունակվել են իր և իր ընտանիքի հասցեին վիրավորանքները:

1.3. Այդ ժամանակ Վ. Թորոսյանը հանձնարարել է աշխատակիցներին, որ նկարահաննեն Ա. Բոշյանին, որից հետո իրեն բերման ենթարկած ոստիկանության աշխատակիցը բջջային հեռախոսով նկարահանել է Ա. Բոշյանին տարբեր դիրքերից, իսկ ինքը հայտնել է իր տվյալները և քրեական օրենսգրքի այն հոդվածը, որի կասկածանքով իրեն բերման են ենթարկել: Նկարահանումից հետո կրկին գնացել են Վ. Թորոսյանի աշխատասենյակ, այնտեղ են եկել նաև երեք աղջիկներ, որոնք ըստ Ա. Բոշյանի եղել են ոստիկանության աշխատակիցներ:

1.4. Վ. Թորոսյանն իր աշխատասենյակ եկած իգական սերի ոստիկանության աշխատակիցներին հանձնարարել է խուզարկել Ա. Բոշյանին, որից հետո այդ աղջիկները Վ. Թորոսյանի աշխատասենյակի վերջնամասում գտնվող հանգստի սենյակում խուզարկել են վերջինիս: Խուզարկություն կատարելու ժամանակ չունենալով նման անհրաժեշտություն և նպատակ ունենալով նվաստացնել Ա. Բոշյանին, ինչպես նաև նրա համար ստեղծել անելանելի իրավիճակ, ոստիկանության աշխատակիցներից մեկը պահանջել է, որ Ա. Բոշյանը ամբողջությամբ հանի հազուստը՝ ասելով, որ իր մարմնի վրա դաշվածքներ և սպիներ է փնտրում: Հազուստը հանելուց հետո պահանջել է, որ կքանստի, որպեսզի պարզեն ներքին օրգաններում արդյոք ինչ-որ իրեր թաքցնում է, թե ոչ:

Խուզարկություն կատարող անձիք միմյանց հետ խոսել են որոշ ժամանակ առաջ խուզարկության արդյունքում խուզարկության ենթարկված անձի ներքին օրգաններում հայտնաբերված իրերի մասին և դրանով իսկ կարևորել են նման կերպ կատարվող խուզարկությունը:

Խուզարկության ավարտից հետո, Վ. Թորոսյանը վերադարձել է և միասին գնացել են բաժնի պետ Շարմազանովի աշխատասենյակ, ճանապարհին Վ. Թորոսյանի կողմից հնչել են սպառնալիքներ և վիրավորական արտահայտություններ, որն էլ շարունակվել է նաև Շարմազանովի աշխատասենյակում: Քիչ անց, այնտեղ է եկել նաև քննչական բաժնի պետ Գալստյանը, ով միանալով Վ. Թորոսյանին և Շարմազանովին, սպառնացել է, որ եթե Ա. Բոշյանը ինքնախստովանական ցուցմունքներ չտա, իրեն կձերբակալեն և 72 ժամ պահելուց հետո կուղարկեն կանանց գաղութ:

Ոստիկանությունում գտնվելու ժամանակ Ա. Բոշյանի ինքնազգացողությունը վատացել է, դեղերը վերցնելու համար ցանկացել է տեսնել ծնողին, սակայն

ոստիկանության աշխատակիցներն իրեն չեն թույլատրել ասելով, որ եթե այդ պահին առանց ծնողի չի դիմանում, ինչպես պետք է դիմանա գաղութում:

Տեսնելով, որ սպառնալիքների և ճնշումների ազդեցությամբ չեն կարողանում համոզել Ա. Բոշյանին խոստովանել իր կողմից չկատարված հանցագործությունը, Գալստյանը խնդրել է, որ Թորոսյանն ու Շարմազանովը դուրս գան սենյակից, որից հետո սկսել է Ա. Բոշյանին համոզել, որ զրի խոստովանական ցուցմունք ասելով, որ այդ մասին ոչ ոք չի իմանա, գործում իր անվան փոխարեն այլ տվյալներ կլրացվեն, հետազոյում ինքը դատարանում կվճարի տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով և ամեն ինչ կավարտվի:

Այդ ժամանակ Գալստյանի հետ գնացել է վերջինիս աշխատասենյակ և միջանցքում հանդիպել են Շարմազանովին, ում Գալստյանը ներկայացրել է որպես իր քավորի: Միջանցքով քայլելու ժամանակ դիմացի պատին առկա ապակու արտացոլանքի մեջ տեսել է, որ Շարմազանովը իր հետեւից ձեռքի շարժումով ինչ-որ ժեստ է արել, որը նմանվել է սեռական բնույթի հայույանքի: Դա նկատել է նաև Գալստյանը, որը նրա կողմից մեկնաբանվել է հետևյալ կերպ. «տես Անի շան ինչ կարծիքի են քո մասին»:

Գալստյանի աշխատասենյակ է եկել քննիչ Հովսեփյանը և ներկայացել է որպես գործը քննող քննիչ, Գալստյանը նրան ասել է, որ Ա. Բոշյանը կզրի խոստավանական ցուցմունքը և միասին գնացել են քննիչի աշխատասենյակ:

Քննիչը Ա. Բոշյանին է տվել ինչ-որ փաստաթղթեր, որոնք ինքն առանց կարդալու ստորագրել է և սկսվել է իր հարցաքննությունը: Քննիչն իրեն թելադրել է ցուցմունքը և Ա. Բոշյանը գրել է, թե իբր, պատրաստել և համացանցի միջոցով տարածել է Մաղլենա Սահակյանի և Նարինե Նավասարդյանի պոռնկազրական բնույթի նկարները: Հարցաքննության ընթացքում Գալստյանը պարբերաբար մտել է քննիչի աշխատասենյակ, ինչ-որ քան է խոսել քննիչի հետ և հեռացել: Հարցաքննությունը տևել է մի քանի ժամ, որի ընթացքում մի քանի անգամ քննիչի հեռախոսով զանգել է ծնողներին:

Գալստյանն ու Հ. Հովսեփյանն իրեն ասել են, որ ոչ ոքի, այդ թվում իր ընտանիքի անդամներին չափ, թե ինչ ցուցմունք է գրել: Հարցաքննության ավարտից հետո ժամը 03.00-ի սահմաններում, քննիչի հետ միասին դուրս է եկել բաժնից:

Շուրջ 7 օր անց Ա. Բոշյանին է զանգել Հ. Հովսեփյանը և պահանջել է անհապաղ ներկայանալ քննչական բաժին: Ա. Բոշյանը ոստիկանության բաժին է ներկայացել 18.11.2014թ. 18:00-ի սահմաններում, որտեղ քննիչն ու Գալստյանն իրեն հարցուիրում են արել ուն Լիլիթ Մուրադյանի վերաբերյալ, թե ինչ կապ կա իրենց միջև, քանի որ վերջինիս համակարգչից հայտնաբերվել են նույն անձանց վերաբերյալ պոռնկազրական բնույթի լուսանկարներ: Ինքը հայտնել է, որ այդպիսի մարդու չի ճանաչում, որևէ կապ չունի նրա հետ հրաժարվելով գրել, որ այդ լուսանկարները միասին են պատրաստել և տարածել, չնայած այն հանգամանքին, որ Հովսեփյանը և Գալստյանը համոզում էին նման ցուցմունք տալուն: Այնուհետև, քննիչի աշխատասենյակում իրեն մեղադրանք է առաջադրվել, կրկին ստորագրել է փաստաթղթեր, որոնց բովանդակությանը չեն ծանոթացրել և քննիչի թելադրանքով գրել է նախորդ ցուցմունքի բովանդակությամբ ցուցմունք: Քննիչը, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման օրինակ իրեն չի տրամադրել պատճառաբանելով, որ կամ այն կերպին, կամ ինչ-որ մեկը կկարդա: Հարցաքննությունը ավարտվել է նոյն օրը ժամը 23:30-ի սահմաններում:

1.5. Ցուցմունքներ կորզելուց հետո ընտանիքում և իր շրջապատում Ա. Բոշյանի մոտ դրսւորվել է անհավասարակշռված վարք, որը ստիպել է ընտանիքի անդամներին մտահոգվել, որն էլ իր հերթին հիմք է հանդիսացել ընտանիքի անդամների կողմից տարբեր հարցերի միջոցով պարզել իրականությունը:

11.11.2014թ., այսուհետև 18.11.2014թ. իր նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից կիրառված ճնշումների ուղղակի հետևանքով, ինչպես նաև հասկանալով այն հանգամանքը, որ դարձել է ոստիկանության աշխատակիցների խարբության զնիք և որ այդ արարքները ինքը չի կատարել, Անի Բոշյանը որոշել է վերջ տալ կյանքին և 2014թ. նոյեմբերի 23-ին դեղահարերի մեծ քանակություն ընդունելու միջոցով ինքնասպանության փորձ է կատարել:

1.6. 2014թ. նոյեմբերի 11-ին, ժամը 11.00-ի սահմաններում, երբ Հակոբ Բոշյանը գտնվել է ինց տանը (ք. Վանաձոր Աբովյան 28) իրենց տուն են եկել ոստիկանության աշխատակիցներ և հետաքրքրվել են իր աղջկա գտնվելու վայրի վերաբերյալ, ինքն էլ հայտնել է, որ աղջիկը Երևանում է: Ոստիկանության մի քանի աշխատակիցներ սկսել են խուզարկել իրենց բնակարանը, իսկ նրանցից Թորոսյան ազգանունով աշխատակիցը իրեն տարել է ոստիկանության Տարոնի բաժին և մինչև ժամը 16.00-ն պահել այնտեղ: Այդ ընթացքում Թորոսյանը և մյուս աշխատակիցները հայինել են իրեն, հարցրել են, թե ուր է աղջիկը, և ասել են, որ մինչև աղջիկը չներկայանա, իրեն բաց չեն թողնի: Հեռախոսը վերցրել են իր ձեռքից և չեն թույլատրել, որ հեռախոսազնությունը կատարի, միայն շատ խնդրելուց հետո են թույլատրել և նա զանգահարել է իր տնօրենին ու հայտնել, որ չի կարող աշխատանքի դուրս գալ:

Հ. Բոշյանին մի քանի ժամ առանց որևէ իրավական հիմքի և առանց որևէ կերպ այդ փաստն արձանագրելու, փաստացի անազատության մեջ պահել են ոստիկանության ինչոր աշխատասենյակում, որից հետո իրեն վերադարձել են հեռախոսը և ասել են, որ զնա տուն, իսկ երբ աղջիկը վերադառնա, պարտավորեցնի նրան ներկայանալ ոստիկանություն: Ինքը քայելով մոտ 25 րոպեում հասել տուն և տեսել, որ ոստիկանները դեռևս խուզարկում են իրենց տունը:

Երեկոյան Ա. Բոշյանը վերադարձել է տուն և իրենց տուն են գնացել ոստիկանության երկու աշխատակիցներ և Ա. Բոշյանին տարել են ոստիկանություն: Այդ օրը, մինչև ժամը 03:00-ն, սպասել են ոստիկանությունում, որից հետո Անիի հետ վերադարձել են տուն: Հ. Բոշյանը մի քանի օր հետո տեղեկացել է, որ դատեր նկատմամբ ոստիկանության աշխատակիցները 11.11.2014թ. ճնշումներ են գործադրել, որի արդյունքում վերջինս ինքնախոստովանական ցուցմունք է տվել:

## 2. Գործի նախապատմությունը.

2.1. 2014 նոյեմբերի 21-ին Անի և Հակոբ Բոշյանները իրենց իրավունքների պաշտպանության համար դիմումներ են ներկայացրել Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ (այսուհետ՝ կազմակերպություն) ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժնի աշխատակիցների

կողմից Ա. Բոշյանի և Հ. Բոշյանի նկատմամբ դրսելու ապօրինությունների վերաբերյալ:

2.2. 2014թ. նոյեմբերի 26-ին Կազմակերպության կողմից ՀՀ գլխավոր դատախազություն և ՀՀ հատուկ քննչական ծառայություն է ներկայացվել հանցագործության մասին հաղորդում:

2.3. 2014թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ հատուկ քաննչական ծառայությունում պաշտոնական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է թիվ 62229814 քրեական գործը:

2.4. 2015թ. հունվարի 14-ին Ա. Բոշյանը թիվ 62229814 քրեական գործով ճանաչվել է տուժող:

2.5. 2015թ. ապրիլի 3-ին Արայիկ Զայյանը և Արթուր Սաքունցը ճանաչվել են տուժող՝ Ա. Բոշյանի ներկայացուցիչներ:

2.6. 2015թ. փետրվարի 2-ին, այնուհետև 2015թ. ապրիլի 4-ին Հ. Բոշյանի կողմից միջնորդություն է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Ն. Բարսեղյանին (այսուհետ՝ նախաքննություն իրականացնող մարմին), իրեն տուժող ճանաչելու պահանջի մասին: Հ. Բոշյանը միջնորդությունը պատճառաբանել է նրանով, որ ոստիկանության աշխատակիցներն իրեն ապօրինի տարել են ոստիկանություն, մի քանի ժամ ապօրինի պահել անազատության մեջ, սեռական բնույթի հայիոյանքներ տալով և նվաստացնելու նպատակով վիրավորել են նրա արժանապատվությունը, այնուհետև ազատ են արձակել:

2.7. 2015թ. փետրվարի 12-ին և ապրիլի 7-ին նախաքննությունն իրականացնող մարմինը գրությամբ հայտնել է, որ ներկայացված միջնորդությունը կցվել է գործին և միջնորդության քննարկումը հետաձգվել է մինչև դրա վերաբերյալ որոշում ընդունելու համար էական հանգամանքների պարզումը:

2.8. 2015թ. ապրիլի 16-ին նախաքննություն իրականացնող մարմնի կողմից կայացվել է որոշում նախորդ՝ 2.6. և 2.7. կետերում նշված միջնորդությունները մերժելու մասին:

2.9. 2015թ. ապրիլի 17-ին նախաքննություն իրականացնող մարմնի կողմից կայացվել է որոշում թիվ 62229814 քրեական գործով քրեական հետապնդում շիրականացնելու և քրեական գործով վարույթը կարձելու մասին:

2.10. 2015թ. մայիսի 4-ին տուժող Անի Բոշյանի ներկայացուցիչներ՝ Արայիկ Զայյանը, Արթուր Սաքունցը, ինչպես նաև Հակոբ Բոշյանը բողոք են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ վերը նշված որոշումը վերացնելու պահանջով:

2.11. 2015թ. մայիսի 11-ին ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության ավագ դատախազ Գ. Գևորգյանի կողմից կայացրվել է որոշում, ներկայացված բողոքը մերժելու մասին:

### **3. Դիմումի իրավական հիմնավորումը և պահանջը.**

1. դիմումների բովանդակությունը ներկայացված է սույն դիմումի դեպքի նկարագրության բաժնում 1.1. և 1.2. կետերում:

3.1. 2015թ. ապրիլի 17-ին ՀՀ ՀՔԾ քննիչ Ն. Բարսեղյանի կողմից կայացվել է որոշում քրեական գործով վարույթը կարձելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին: Կայացված որոշման ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ նախաքննության մարմնի կողմից ձեռնարկված միջոցառումները կատարվել են թերություններով և նրա կողմից օբյեկտիվորեն չեն գնահատվել գործում առկա ապացույցները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածում ամրագրված է, որ դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածում սահմանված է, որ ապացուցումը, գործի օրինական հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը, գնահատելն է:

Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռք բերման աղբյուրներն ստուգելու միջոցով<sup>2</sup>: Իսկ նույն օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ քննիչը, դեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում է ապացույցների համակցության մեջ, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իր ներքին համոզմամբ:

3.1.1. Սույն գործի շրջանակներում նախաքննության մարմինը ձեռքի տակ ունենալով՝ Անի Բոշյանի, Հակոբ Բոշյանի, Բավական Խաչատրյանի և ոստիկանության աշխատակիցներ Վազգեն Թորոսյանի, Անի Գարբիելյանի, Կարեն Սուրայյանի, Արման Գալստյանի, Հովսեփ Հովսեփյանի, Էրիկ Շարմազանովի և Արմեն Դերձյանի կողմից տրված իրարամերժ ցուցմունքները, առանց պատշաճ պատճառաբանությունների արժանահավատ է համարել ոստիկանության աշխատակիցների կողմից տրված ցուցմունքները, իսկ Անի Բոշյանի, Հակոբ Բոշյանի և Բավական Խաչատրյանի ցուցմունքները այն մասին, որ Անի և Հակոբ Բոշյանները ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել է անմարդկային վերաբերմունքի և անօրինական պահվել անազատության մեջ, արժանահավատ չի համարվել:

2. Քրեական դատավարության օրենսգիրք՝ հոդված 126:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ռամսահայի գործով վճռի 326-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը «(...) ոստիկաններ Բրոնսը և Բալստրան հարցաքննվել են միայն դեպքից մի քանի օր անց և այդ ժամանակահատվածում նրանք հնարավորություն են ունեցել պատահարը քննարկել միմյանց և այլոց հետ»:

Ռամսահայի գործով վճռի 330-րդ կետում սահմանված է. «(...) ոստիկաններ Բրոնսը և Բալստրան դեպքից հետո չեն պահվել իրարից մեկուսի և չեն հարցաքննվել զրեթե երեք օր (...): Չնայած, (...) չկա որևէ ապացույց առ այն, որ նրանք գաղտնի համաձայնության են եկել միմյանց կամ Ամստերդամի ոստիկանական ուժերի իրենց գործընկերների հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախաքննության պատշաճության հական թերություն»:

Սույն պարագայում նախաքննության շրջանակներում չեն ձեռնարկվել այնպիսի միջոցառումներ, որոնք կարող էին բացառել ոստիկանության աշխատակիցների՝ մինչև ցուցմունքներ տալը նախապես պայմանավորվելը:

3.1.2. Նախաքննության մարմինը քրեական գործի վարույթը կարձելու մասին որոշման 10-րդ էջի 2-րդ պարբերությունում անդրադառնալով Հ. Բոշյանի ոստիկանությունում գտնվելու հանգամանքին, հանգել է հետևյալ հետևողականը «Հատկանշական է այն, որ Հ. Բոշյանը հայտնել է, որ ինքը ոստիկանության աշխատակիցներին բաժնից դրւու գալու ցանկություն չի հայտնել քանի, որ իրեն ասել էին, որ մինչև աղջիկը չներկայանա իրեն բաց չեն թողնի, սակայն վերջինս չի հստակեցրել, թե նման պայմաններում ինչպես է ստացվել, որ առանց Ա. Բոշյանի ներկայանալու ինքը հեռացել է ոստիկանությունից»:

Այսպիսով, նախաքննության մարմինը ոստիկանության շենքը նույնականացրել է գրուանքի և ժամանցի վայրի հետ, որտեղ քաղաքացիները ըստ իրենց ցանկության կարող են այցելել, մնալ աշխատասենյակներում ինչքան ցանկանան, սուրճ խմել և ըստ իրենց ցանկության թողնել ոստիկանության բաժինը:

Նման մեկնաբանությունը որևէ իրավական հիմք չունի և չի համապատասխանում ոչ միայն իրականությանը, որի մասին ցուցմունքում նշել է Հ. Բոշյանը, այլև տարրական ողջամտությանը:

3.1.3. Նախաքննության մարմին կողմից որևէ քննություն չի իրականացվել՝ Ա. Բոշյանի և առերես հարցաքննվող Վ. Թորոսյանի, Ա. Գարրիելյանի, Է. Շարմազանովի, Ա. Գալստյանի և Հ. Հովսեփյանի ցուցմունքների միջև ակնհայտ հակասությունները պարզելու ուղղությամբ, որոնք վերաբերվում էին Ա. Բոշյանի նկատմամբ

3. Եվրոպական դատարանի 15 մայիսի 2007 թ. գանգատ թիվ 52391/99 Ramsahai and others v. The Netherlands գործ:

ոստիկանության աշխատակիցների կողմից կիրառված ապօրինությունների տեղի (աշխատասենյակի), հետաքննչական գործողությունների կատարման ծավալի, տեսակի, հետաքննչական բաժնից քննչական բաժին տեղափոխելու հանգամանքների:

Նախաքննության մարմինը որոշումը ընդունել է առերես հարցաքննություններից մի քանի օր հետո այն դեպքում, եթե տվյալ առերես հարցաքննությունների ժամանակ բացահայտված հակասություններից անմիջապես հետո կարճ ժամանակ անց անհրաժեշտ էր այդ հակասությունների վերաբերյալ իրականացնել անհրաժեշտ քննչական գործողություններ:

Այսպիսով, նախաքննության մարմինը չիրականացնելով անհրաժեշտ քննություն ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներում առկա հակասությունների պարզաբանման ուղղությամբ, որի համար անհրաժեշտ էր որոշակի ժամանակ և քննչական գործողություններ, դրանք ի հայտ գալուց հետո օրեր անց, որոշում է կայացնում քրեական հետապնդում չիրականացնելու և վարույթը կարձելու մասին, նման շտապողականությունը հիմք է տալիս պնդելու, որ նախաքննություն իրականացնող մարմնի կողմից չի ապահովվել բազմակողմանի, լրիվ և օբեկտիվ քննության սկզբունքների իրականացումը, այլ այն նպատակ է հետապնդել կոծկելու ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված հանցագործությունը, շուտափույթ դադարեցնել գործի քննությունը ապօրինի որոշման կայացման միջոցով։ Հետևաբար, նախաքննությունն իրականացնող մարմնի գործողությունները ուղղված չեն եղել վատ վերաբերմունքի դեպքի հանգամանքների լրիվ և օբեկտիվ պարզմանը։

3.2. Քրեական գործի վարույթը կարձելու մասին որոշման 5-րդ եջի 7 պարբերությունում՝ Ռ. Թորոսյանի ցուցմունքում նշվում է՝ «նույն օրը երեկոյան, հանձնարարվել է օպերլիազորին գնալ և պարզել, թե Ա. Բոշյանն արդյոք վերադարձել է թե ոչ, և տեղեկանալով, որ վերադարձել է, հանձնարարել է նրան բերման ենթարկել ոստիկանություն։»

Համաձայն՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի «Ոստիկանության ծառայողները մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում անմիջապես պարտավոր են նրա համար մատչելի և հասկանալի լեզվով ներկայացնել սահմանափակման հիմքերն ու պատճառները, ծանոթացնել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աշակեցնել իրավունքների իրացմանը։»

Մինչդեռ, ոստիկանության աշխատակիցները Ա. Բոշյանին բերման ենթարկելիս չեն ներկայացրել անձին բերման ենթարկելու մասին որոշում, ինչպես նաև չի ներկայացվել նրա իրավունքները և պարտականությունները։

Սույն փաստի վերաբերյալ նախաքննության շրջանակներում չեն կատարվել քննչական այնպիսի գործողություններ, որով կպարզվեր վերը նշված փաստական հանգամանքները։

Մինչդեռ, ՀՀ Կառավարության 14 հունիսի 2007 թվականի N 818-Ն որոշմամբ Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման

Ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին որոշման N 1 հավելվածի 1-ին մասի 1 կետի համաձայն՝ մարդն իրավունք ունի սահմանափակման պահից իմանալու իր իրավունքների սահմանափակման պատճառները, հիմքերը, իր իրավունքները սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը: Համաձայն՝ նույն որոշման N 2 հավելվածի 2-րդ մասի մարդու իրավունքը սահմանափակելիս ոստիկանության ծառայողը ներկայանում է՝ հայտնելով իր պաշտոնը, կոչումը և ազգանունը:

Սույն դեպքում նախաքննություն իրականացնող մարմինը որոշում կայացնելիս չի անդրադարձել վերը թվարկված խախուսմերին, որոնք հիմք են հանդիսանում ոստիկանության աշխատակիցներին պատասխանատվության ենթարկելու համար:

3.4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազտությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով»:

Բերման ենթարկելը դատավարական հարկադրանքի միջոց է, որի կիրառման դեպքերը, կարգն ու հիմքերը սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն՝ բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի բննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, (...) հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է՝ նրա նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար (...):

Բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառարանված որոշման հիման վրա:

Սույն պարագայում վերը վկայակոչված իրավական ակտի համաձայն՝ բերման ենթարկելու պայմանները իսպառ բացակայել են, սակայն չնայած այդ հանգամանքին Ա. Բոշյանը ենթարկվել է բերման: Հատկանշական է, որ նոյն քրեական գործի նախաքննության ընթացքում Անի Բոշյանը մինչ այդ արդեն մի քանի անգամ որպես վկա հարցաքննվելու համար առանց որևէ խոչընդոտներ հարուցելու ներկայացել է նախաքննական մարմին և տվել համապատասխան ցուցմունքներ:

Ավելին, վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն ստուգվել այն փաստական հանգամանքերը, որ Անի և Հակոբ Բոշյանները, ինչպես նաև Բավական Խաչատրյանը իրենց ցուցմունքներում և բացատրություններում նշել էին այն մասին, որ 11.11.2014թ. ժամը 17:00-ի սահմաններում Ա. Բոշյանը Երևանից վերադառնալուց հետո ինքնակամ ներկայացել է ոստիկանություն, Բ. Խաչատրյանը զանգահարել է Ա. Դերձյանին, որը հայտնել է, որ քննիչը տեղում չի գնացեք տուն սպասեք ես կզանգեմ կզաք:

Նման պայմաններում բերման ենթարկելու իրավական հիմքն իսպառ բացակայում է, որը նախաքննության մարմնի կողմից իրավական գնահատականի չի արժանացել, չեն քննարկվել այն հանգամանները, թե Ա. Բոշյանին բերման ենթարկելը եղել է իրավաչափ, հետապնդել է արդյոք իրավաչափ նպատակ, թե եղել է ոստիկանության կողմից

ծրագրված այնպիսի գործողությունների մի մասը, որոնք ուղղված էին Ա.Բոշյանից ստանալու խոստովանական ցուցմունքներ:

3.5. Նախաքննության մարմինի կողմից իրավական գնահատական չի տրվել այն հանգամանքին, որ Ա. Բոշյանը 11.11.2014թ. ոստիկանության բաժին է բերման ենթարկվել ժամը 18:00-ին և այնտեղից դուրս է եկել միայն զիշերը ժամը 03:00-ին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 188<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «քննչական գործողությունների իրականացումը զիշերային ժամերին չի թույլատրվում, բացառությամբ անհետաձգելի դեպքերի»:

Այս դեպքում քրեական գործի վարույթը կարձելու մասին որոշումը վերը նշված իրավանորմի լույսի ներքո պատճառաբանված չէ, չկա պատճառաբանություն Ա.Բոշյանի նկատմամբ զիշերը քննչական գործողություններ կատարելու մասին, որը հիմք է տալիս պնդելու, որ նրան երեկոյան ժամը 22:00-ից մինչ 03:00 պահել և քննչական գործողություններ են կատարել ապօրինի նպատակ ունենալով արգելված վերաբերմունքի արդյունքում ամեն գնով ստանալու խոստովանական ցուցմունքներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից (.....) ավելի»:

Սույն դեպքում 18.11.2014թ. Ա. Բոշյանը Հ. Հովսեփյանի կանչով ներկայացել է քննչական բաժին ժամը 18:00-ի սահմաններում, ենթարկվել է հարցաքննության, որի ընթացքում վերջինիս առաջադրվել է մեղադրանք և ոստիկանությունից դուրս է եկել միայն 23:30-ի սահմաններում, որը գերազանցում է վերը նշած իրավանորմով սահմանված հարցաքննության համար նախատեսված 4 ժամը:

Այս դեպքում ՀՀ հասուն քննչական ծառայության քննիչ Ն. Բարսեղյանը որոշում կայացնելիս չի անդրադարձել վերը թվարկված խախտումներին, որոնք հիմք են հանդիսանում ոստիկանության աշխատակիցներին պատասխանատվության ենթարկելու համար:

3.6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խարեւության, նրանց իրավունքների ուսնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով:

Այնինչ, ոստիկանությունում և քննչական բաժնում գտնվելու ամբողջ ընթացքում ոստիկանության բաժնում եղած ոստիկանության և քննչական կոմիտեի աշխատակիցներ՝Վ. Թորոսյանը, Ա. Գալստյանը, Է. Շարմազանովը, Ա. Գաբրիելյանը և Հ. Հովսեփյանը սպառնալիքների, վիրավորական արտահայտությունների, ապօրինի բերման ենթարկելու, նվաստացնող մեթոդներով անձնական խուզարկության և ապօրինի նկարահանման միջոցով վերջինից կորզել են ցուցմունքներ:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիալի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, իիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունը որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

Սահմանադրության 47-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը պարտադիր է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր մարմինների և անձանց համար:

Սույն դեպքում քրեական գործի վարույթը կարձելու մասին որոշման հիմքում բացառապես դրվել են Ա. Բոշյանի նկատմամբ հոգեբանական ճնշումներ գործադրած ուստիկանության և քննչական կոմիտեի աշխատակիցների ցուցմունքները, որոնցից ումանք իրաժարվել են տուժողի ներկայացուցչի հարցադրումներին պատասխանելուց պատճառաբանելով, որ իրենց կողմից տրված պատասխանը հետազայում կարող է իրենց դեմ օգտագործվել, որը ապացուցում է այն հանգամանքը, որ նրանք այդ ժամանակվանից իրենց զգացել են մեղադրյալի կարգավիճակում, որը նույնպես նախաքննության մարմնի կողմից չի գնահատվել:

3.7. 2014 թվականի նոյեմբերի 11-ին՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցները Հ. Բոշյանին ժամը 11:00-ից 12:00-ի սահմաններում իր բնակարանից իրենց հետ տարել են Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժին, որտեղ թվով 5 ոստիկաններ նրան սկսել են սեռական բնույթի հայիոյանքներ տալ և սպառնացել են, որ եթե իրենց չհայտնի Ա. Բոշյանի գտնվելու վայրը, կծեծեն: Տվյալ աշխատասենյակում նրան պահել են մոտավորապես 2 ժամ, որի ընթացքում ոստիկանության աշխատակիցները սպառնացել են, որ իրենց կապերի միջոցով կզրկեն նաև աշխատանքից:

Ոստիկանությունում գտնվելու ժամանակահատվածում Հ. Բոշյանը փորձել է զանգահարել իր տնօրենին որպեսզի հայտնի աշխատանքի չներկայանալու պատճառների մասին, սակայն չի կարողացել խոսքը ավարտել, քանի որ ոստիկանության աշխատակիցները հեռախոսը ձեռքից խլել են և թույլ չեն տվել այլ զանգեր կատարել: Երկու ժամ տվյալ աշխատասենյակում պահելուց հետո տեղափոխել են հարակից աշխատասենյակ: Այնուհետև, ժամը 16:00-16:30-ի սահմաններում դիմացի սենյակում նստած ոստիկանության աշխատակիցը ինչ-որ հեռախոսազանգ է ստացել որից հետո վերադարձել են քջային հեռախոսը և ասել են, որ գնա դատերը վերցնի և զա ոստիկանություն: Նշված ժամանակահատվածում ոստիկանության աշխատակիցների կողմից որևէ փաստաթուղթ չեն լրացվել:

Սույն պարագայում ոստիկանության աշխատակիցները Հ. Բոշյանին անօրինական կարգով ազատությունից հարկադրաբար զրկել են շուրջ 4 ժամ 40 րոպե:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է

ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝

1) անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից,

2) անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը,

3) օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով,

4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով. 5) (...),

6) վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, զինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով. (...):»:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

Սույն պարագայում ոստիկանության աշխատակիցները Հ.Բոշանին անազատության մեջ պահելով շուրջ 4 ժամ 40 րոպե և չունենալով ՀՀ սահմանադրության 16-րդ հոդվածում թվարկված հիմքերից որևէ մեկը, կատարել են հանցագործություն:

3.5. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

3.5.1. Ավելին՝ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 3-րդ հոդվածն մեկնարանել է ժողովրդավարական հասարակությունների հիմնարար արժեքների լույսի ներքո: Ի տարբերություն Կոնվենցիայում ամրագրված այլ հիմնական դրույթների, 3-րդ հոդվածը որևէ բացառություն չի նախատեսում և 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որևէ շեղում անթույլատրելի է, նույնիսկ ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրության ժամանակ<sup>4</sup>: Դատարանը հաստատել է, որ նույնիսկ ամենաբարդ հանգամանքներում, ինչպիսին է ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, Կոնվենցիան բացարձակ անթույլատրելի է համարում խոշտանգումն ու անմարդկային կամ մարդու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝

4. տես՝ <<Selimoune ընդրեմ Ֆրանսիայի>> գործով [GC] վճիռ, գանգատ թիվ 25803/94, կետ 95, ECHR 1999-V, 7, և վերոհիշյալ Լարիտայի գործը, կետ 119:

անկախ մեղադրվող անձի վարքագծից<sup>5</sup>: Դիմողի կողմից կատարված ենթադրյալ հանցանքի բնույթը 3-րդ հոդվածի իմաստով որևէ դեր չի կատարում<sup>6</sup>:

Վատ վերաբերմունքը 3-րդ հոդվածի կարգավորման շրջանակում դիտարկելու համար այն պետք է լինի ծանրության որոշակի նվազագույն աստիճանի: Այդ նվազագույն աստիճանի առկայության գնահատումը կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են՝ անօրինական վերաբերմունքի տևողությունը, ֆիզիկական կամ հոգեկան հետևանքները և տուժածի առողջական վիճակը, այնպես էլ դրա ենթատեսրուր, ինչպիսին է, օրինակ, չափազանց լարված ու հուզական մթնոլորտը<sup>7</sup>:

Սույն գործի շրջանակներում Ա. Բոշյանի և Հ. Բոշյանի կողմից տրված ցուցմունքներում վերջիններս պնդել են, որ ոստիկանների հասցրած հարվածներ չեն եղել, այլ հոգեբանական ճնշումներ գործադրելու եղանակ են հանդիսացել, և դրանցից նրանք մարմնական վնասվածքներ չեն ստացել, այլ ամբողջ գործողությունները հետապնդել են նրանց նվաստացնելու նպատակ, որին նրանք չդիմանալով տվել են իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ:

Սույն գործի շրջանակներում Անի Բոշյանի նկատմամբ վատ վերաբերմունքի արդյունքում վերջինս կատարել է ինքնասպանության փորձ (որը իր կամքին հակառակ կանխվել էր), որը անմիջապես պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում նրա նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից դրսերված վատ վերաբերմունքը: Ոստիկանության աշխատակիցների նման վարքագիր դրսերումը Անի Բոշյանի մոտ առաջացրել է վախի, տագնապի և թերարժեքության զգացում, և տուժածին վիրավորելու ու նսեմացնելու արդյունքում կոտրվել է նրա ֆիզիկական ու հոգեկան կամքը, որը նրան ստիպել է գործել իր կամքին և խղճին հակառակ:

Եվլոպական Դատարանը վերաբերմունքը որակում է որպես «անմարդկային», քանի որ, inter alia, այն կանխամտածված էր, տևել էր մի քանի ժամ և պատճառել էր իրական մարմնական վնասվածքներ և ծանր ֆիզիկական ու հոգեկան տառապանքներ: Վերաբերմունքը համարվում է «նվաստացնող», եթե դրա արդյունքում տուժածի մոտ առաջանում է վախի, տագնապի և թերարժեքության զգացում, և տուժածին վիրավորելու ու նսեմացնելու արդյունքում կոտրում է նրա ֆիզիկական ու հոգեկան կամքը, կամ եթե այն ստիպում է տուժածին գործելու իր կամքին կամ խղճին հակառակ<sup>8</sup>:

Սույն պարագայում նախաքննություն իրականացնող մարմինը պարտավոր էր ըստ վկայակոչած նախադեպի, ելնելով Անի Բոշյանի ցուցմունքներից և գործի հանգամանքներից նշանակել համապատասխան հոգեբանական-հոգեբուժական փորձաքննություններ, որոնք ունակ կլինեին պարզելու թե՝ Անի Բոշյանին և Հակոբ Բոշյանին մոտ առկա է արդյոք՝ վախի, տագնապի և թերարժեքության զգացում, կոտրված է արդյոք նրանց ֆիզիկական ու հոգեկան կամքը:

5. Տես՝ <<Չահապն ընդիմ Միացյալ Թագավորության>> գործով 1996թ. նոյեմբերի 15-ի վճիռը, կետ 79, Զեկույցներ of Judgments and Decisions 1996-V, և վերոհիշյալ Լարիտայի գործը, կետ 119:

6. Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի գործով 13-րդ կետը (զանգատ թիվ 22978/05)

7. Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի գործով 14-րդ կետը (զանգատ թիվ 22978/05)

8. Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի գործով 15-րդ կետը (զանգատ թիվ 22978/05)

Կոնվեցիայի 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի սպառնալիքը, եթե այն բավականաչափ լուրջ և իրական է, կարող է ամբողջությամբ համապատասխանել այդ պայմաններ: Ուստի անձին խոշտանգմամբ սպառնալը կարող է առնվազն որպես անմարդկային վերաբերմունք որակվել<sup>9</sup>:

3.5.2. Նախաքննություն իրականացնող մարմինը չի ձեռնարկել համապատասխան միջոցներ հաղորդման մեջ նշված հանգամանքները պարզելու համար մասնավորապես.

ա. Չեն հարցաքննվել 11.11.2014թ. Բոշյանների ընտանիքին պատկանող Վանաձոր քաղաքի Աբովյան 28 հասցեի բնակարանում խուզարկության ժամանակ ներկա գտնված ընթերականները, որոնք կարող էին ցուցմունք տալ Հ. Բոշյանին բնակարանից ոստիկանություն տանելու պատճառաբանության, ժամանակի և գործով էական նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ:

բ. Չեն իրականացվել քննչական գործողություններ պարզելու համար Ա. Բոշյանի մինչ բերման ենթարկվելը ոստիկանություն այցելելու և վերջինիս մոր՝ Բ. Խաչատրյանի և Ա. Դերձյանի հեռախոսազանգի իսկությունը ճշտելու ուղղությամբ:

գ. Չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ պարզելու համար Ա. Բոշյանի այն ենթադրությունները, որ իր խուզարկության ժամանակ ներկա գտնված Հեղինե Ավետիսյանը և Հեղինե Խառաւոյանը ոստիկանության աշխատակիցներ չեն եղել:

դ. Նախաքննության շրջանակներում չեն ձեռնարկվել այնպիսի միջոցառումներ, որոնք կարող էին բացառել ոստիկանության աշխատակիցների՝ մինչև ցուցմունքներ տալը նախապես պայմանավորվելը:

ե. Նախաքննության շրջանակներում չի առգրավվել և վերծանվել Վանաձոր քաղաքի Տարոնի բաժանմունքում տեղադրված տեսախցիկների միջոցով ֆիքսված ձայնագրությունները, որոնք կարող էին հիմնավորել Ա. Բոշյանի, Հ. Բոշյանի, Բ. Խաչատրյանի կողմից վկայակոչած մի շարք հանգամանքներ:

զ. Նախաքննության շրջանակներում չի նշանակվել համապատասխան հոգեբանական-հոգեբուժական փորձաքննություններ, որոնք ունակ կլինիկներին պարզելու, թե Անի և Զակոր Բոշյանների մոտ առկա է արդյոք վախի, տագնապի և թերարժեքության զգացում, կոտրված է արդյոք նրանց ֆիզիկական ու հոգեկան կամքը:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից, գործի քննության ընթացքում չի նշանակվել դատահոգեբանական և դատահոգեբուժական փորձաքննություն Ա. Բոշյանի կողմից ինքնասպանության փորձ կատարելուն հանգեցրած հանգամանքները և շարժառիթները պարզելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածները.

## ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

<sup>9</sup> Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի գործով 17-րդ կետը (գանգատ թիվ 22978/05)

Բողոքը ճանաչել հիմնավորված, վերացնել դիմումատուների իրավունքների և  
ազատությունների խախտումները և գործն ուղարկել նախարաննության:

*Կից ներկայացվում է*

1. 17.04.2015թ. քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարձելու մասին որոշման պատճենը,
2. ~~30.04.~~ 2015թ. ՀՀ զիսավոր դատախազին ներկայացված դիմում-բողոքի պատճենը,
3. 11.05.2015թ. ՀՀ զիսավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության ավագ դատախազ Գ. Գևորգյանի բողոքը մերժելու մասին որոշման պատճեն:

Դիմողներ՝

Ա. Բոշյան

Տ. Բոշյան

Ա. Սարգսյան

Ա. Զայյան

03. 06. 2015թ.

Հայաստանի Հանրապետության զիսավոր  
դատախազ գ. Կոստանդնուպոլիս

Դիմումատուներ՝

Անի Հակոբի Բոշյան  
Հասցե՝ ք. Վանաձոր Աբովյան 28

Հակոբ Բոշյան  
Հասցե՝ ք. Վանաձոր Աբովյան 28

Ներկայացուցիչներ՝

1. Արայիկ Միքայելի Զալյան

2. Արթուր Ալբերտի Սարունց  
Ծանուցման հասցե՝ ք. Վանաձոր Տիրան Մեծի 59

## ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ

(ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Ն. Բարսեղյանի 17.04.2015թ. քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու պահանջի մասին)

### 1. Դեպքի նկարագրություն.

1.1. 2014թ. նոյեմբերի 11-ին երբ Անի Բոշյանն իր անձնական գործերով գտնվել է Երևան քաղաքում, իրեն զանգահարել է մայրը՝ Բավական Խաչատրյանը և հայտնել է, որ ոստիկանության Տարոնի բաժնի աշխատակիցները զնացել են իրենց բնակարան, կատարում են խուզարկություն, այնուհետև վերջիններս Ա. Բոշյանի հորը՝ Հակոբ Բոշյանին տարել են ոստիկանություն, ապա Բ. Խաչատրյանը պահանջել է, որ աղջիկը անմիջապես վերադառնա Վանաձոր:

Նույն օրը, ժամը 17:00-ի սահմաններում, երբ Ա. Բոշյանն արդեն տանն է եղել ընտանիքի անդամների՝ մոր և հոր հետ միասին զնացել են ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժին, որտեղից Բ. Խաչատրյանը զանգահարել է իր դասընկեր՝ Ա. Դերձյանին (ով աշխատում է ոստիկանությունում) և հայտնել է, որ իրենք գտնվում են ոստիկանության բակում և հարցրել է, թե ում մոտ պետք է բարձրանան, Ա. Դերձյանը պատասխաննելով հարցին հայտնել է, որ զնացեք տուն, տանը սպասեք, ինքը կասի երբ գան: Այնուհետև, վերջիններս զնացել են իրենց տուն (ք. Վանաձոր Աբովյան 28): Նույն օրը, 18:00-ի սահմաններում նրանց տուն են զնացել ոստիկանության երկու աշխատակից և Ա. Բոշյանին տարել են ոստիկանության Տարոնի բաժին, մայրը նույնպես նստել է ոստիկանների ավտոմեքենան, իսկ հայրը ոստիկանություն է զնացել իր մեքենայով:

1.2. Ոստիկանության բաժնում ոստիկանները կազմել են ինչ-որ փաստաթղթեր, որոնք Ա. Բոշյանը ստորագրել է, որից հետո իրեն տարել են բաժնի պետի տեղակալ

Թորոսյանի աշխատասենյակ, որտեղ վերջինս իր հասցեին անպարկեցաւ արտահայտություններ է արել և մեղադրել պոռնկազրական նյութեր տարածելու մեջ, որին ի պատասխան ինքն ասել է, որ նման արարք չի կատարել, սակայն իրեն ոչ ոք չի լսել՝ հակառակը շարունակվել են վիրավորանքներն իր և իր ընտանիքի հասցեին:

1.3.Այդ ժամանակ Թորոսյանը հանձնարարել է աշխատակիցներին, որ նկարահանեն Ա. Բոշյանին, որից հետո իրեն բերման ենթարկած ոստիկանության աշխատակիցը բջջային հեռախոսով նկարահանել է Ա. Բոշյանին տարբեր դիրքերից իսկ ինքը հայտնել է իր տվյալները և քրեական օրենսգրքի այն հոդվածը, որի կասկածանքով իրեն բերման են ենթարկել: Նկարահանումից հետո կրկին գնացել են Թորոսյանի աշխատասենյակ, այնտեղ են եկել նաև երեք աղջիկներ, որոնք ըստ Ա. Բոշյանի եղել են ոստիկանության աշխատակիցներ:

1.4. Թորոսյանն իր աշխատասենյակ եկած իգական սեոի ոստիկանության աշխատակիցներին հանձնարարել է խուզարկել Ա. Բոշյանին, որից հետո այդ աղջիկները Թորոսյանի աշխատասենյակի վերջնամասում գտնվող հանգստի սենյակում խուզարկել են վերջինիս: Խուզարկություն կատարելու ժամանակ չունենալով նման անհրաժեշտություն և նպատակ ունենալով նվաստացնել Ա. Բոշյանին, ինչպես նաև նրա համար ստեղծել անելանելի իրավիճակ, ոստիկանության աշխատակիցներից մեկը պահանջել է, որ Ա. Բոշյանը ամբողջությամբ հանի հազուստը՝ ասելով, որ իր մարմնի վրա դաշվածներ և սպիներ է փնտրում: Հազուստը հանելուց հետո պահանջել է, որ կրանստի, որպեսզի պարզեն ներքին օրգաններում արդյոք ինչ-որ իրեր թաքցնում է, թե ոչ:

Խուզարկություն կատարող անձիր միմյանց հետ խոսել են որոշ ժամանակ առաջ խուզարկության արդյունքում խուզարկության ենթարկված անձի ներքին օրգաններում հայտնաբերված իրերի մասին և դրանով իսկ կարևորել են նման կերպ կատարվող խուզարկությունը:

Խուզարկության ավարտից հետո, Թորոսյանը վերադարձել է և միասին գնացել են բաժնի պետ Շարմազանովի աշխատասենյակ, ճանապարհին Թորոսյանի կողմից հնչել են սպառնալիքներ և վիրավորական արտահայտություններ, որն էլ շարունակվել է նաև Շարմազանովի աշխատասենյակում: Քիչ անց, այնտեղ է եկել նաև քննչական բաժնի պետ Գալստյանը, ով միանալով Թորոսյանին և Շարմազանովին, սպառնացել է, որ եթե Ա. Բոշյանը ինքնախոստովանական ցուցմունքներ չտա, իրեն կձերքակալեն և 72 ժամ պահելուց հետո կուղարկեն կանանց գաղութ:

Ոստիկանությունում գտնվելու ժամանակ Ա. Բոշյանի ինքնազգացողությունը վատացել է, դեղերը վերցնելու համար ցանկացել է տեսնել ծնողին, սակայն ոստիկանության աշխատակիցներն իրեն չեն թույլատրել ասելով, որ եթե այդ պահին առանց ծնողի չի դիմանում, ինչպես պետք է դիմանա զարություն:

Տեսնելով, որ սպառնալիքների և ճնշումների ազդեցությամբ չեն կարողանում համոզել Ա. Բոշյանին խոստովանել իր կողմից չկատարված հանցազրծությունը, Գալստյանը խնդրել է, որ Թորոսյանն ու Շարմազանովը դուրս գան սենյակից, որից հետո սկսել է իրեն համոզել, որ զրի խոստովանական ցուցմունք ասելով, որ այդ մասին ոչ ոք չի

իմանա, գործում իր անվան փոխարեն այլ տվյալներ կլրացվեն, հետազայում ինքը դատարանում կվճարի տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով և ամեն ինչ կավարտվի:

Այդ ժամանակ Գալստյանի հետ զնացել է վերջինիս աշխատասենյակ և միջանցրում հանդիպել են Շարմազանովին, ում Գալստյանը ներկայացրել է որպես իր քավորի: Միջանցրով քայլելու ժամանակ դիմացի պատին առկա ապակու արտացոլանքի մեջ տեսել է, որ Շարմազանովը իր հետևից ձեռքի շարժումով ինչ-որ ժեստ է արել, որը նմանվել է սեռական բնույթի հայինանքի: Դա նկատել է նաև Գալստյանը, որը նրա կողմից մեկնաբանվել է հետևյալ կերպ. «տես Անի ջան ինչ կարծիքի են քո մասին»:

Գալստյանի աշխատասենյակ է եկել քննիչ Հովսեփյանը և ներկայացել է որպես գործը քննող քննիչ, Գալստյանը նրան ասել է, որ Ա.Բոշյանը կզի խոստավանական ցուցմունքը և միասին զնացել են քննիչի աշխատասենյակ:

Քննիչը Ա. Բոշյանին է տվել ինչ-որ փաստաթղթեր, որոնք ինքն առանց կարդալու ստորագրել է և սկսվել է իր հարցաքննությունը: Քննիչն իրեն թելադրել է ցուցմունքը և Ա. Բոշյանը գրել է, թե իբր, պատրաստել և համացանցի միջոցով տարածել է Մաղենա Սահակյանի և Նարինե Նավասարդյանի պոռնկազրական բնույթի նկարները: Հարցաքննության ընթացքում Գալստյանը պարբերաբար մտել է քննիչի աշխատասենյակ, ինչ-որ քան է խոսել քննիչի հետ և հեռացել: Հարցաքննությունը տևել է մի քանի ժամ, որի ընթացքում մի քանի անգամ քննիչի հեռախոսով զանգել է ծնողներին:

Գալստյանն ու Հովսեփյանն իրեն ասել են, որ ոչ ոքի, այդ թվում իր ընտանիքի անդամներին չափի, թե ինչ ցուցմունք է գրել: Հարցաքննության ավարտից հետո ժամը 03.00-ի սահմաններում, քննիչի հետ միասին դուրս է եկել բաժնից:

Ծուրջ 7 օր անց Ա. Բոշյանին է զանգել է Հովսեփյանը և պահանջել է անհապաղ ներկայանալ քննչական բաժին: Ա. Բոշյանը ոստիկանության բաժին է ներկայացել 18.11.2014թ. 18:00-ի սահմաններում, որտեղ քննիչն ու Գալստյանն իրեն հարցուփորձ են արել ոմն Լիլիթ Սուրայյանի վերաբերյալ, թե ինչ կապ կա իրենց միջև, քանի որ վերջինիս համակարգչից հայտնաբերվել են նույն անձանց վերաբերյալ պոռնկազրական բնույթի լուսանկարներ: Ինքը հայտնել է, որ այդպիսի մարդու չի ճանաչում, որևէ կապ չունի նրա հետ հրաժարվելով գրել, որ այդ լուսանկարները միասին են պատրաստել և տարածել, չնայած այն հանգամանքին, որ Հովսեփյանը և Գալստյանը համոզում են նման ցուցմունք տալուն: Այնուհետև, քննիչի աշխատասենյակում իրեն մեղադրանք է առաջադրվել, կրկին ստորագրել է փաստաթղթեր, որոնց բովանդակությանը չեն ծանոթացրել և քննիչի թելադրանքով գրել է նախորդ ցուցմունքի բովանդակությամբ ցուցմունք: Քննիչը, որպես մեղադրյալ ներգրավվելու մասին որոշման օրինակ իրեն չի տրամադրել պատճառաբանելով, որ կամ այն կկորցինի, կամ ինչ-որ մեկը կկարդա: Հարցաքննությունը ավարտվել է նույն օրը ժամը 23:30-ի սահմաններում:

1.5. Ցուցմունքներ կորզելուց հետո ընտանիքում և իր շրջապատում Ա. Բոշյանի մոտ դրսենորվել է անհավասարակշռված վարք, որը ստիպել է ընտանիքի անդամներին մտահոգվել, որն էլ իր հերթին հիմք է հանդիսացել ընտանիքի անդամների կողմից տարբեր հարցերի միջոցով պարզել իրականությունը:

11.11.2014թ. այնուհետև 18.11.2014թ. իր նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից կիրառված ճնշումների ուղղակի հետևանքով, ինչպես նաև

հասկանալով այն հանգամանքը, որ դարձել է ոստիկանության աշխատակիցների խարեւության զոհը և որ այդ արարքները ինքը չի կատարել, Անի Բոշյանը որոշել է վերջ տալ կյանքին և 2014թ. նոյեմբերի 23-ին դեղահարերի մեծ քանակություն ընդունելու միջոցով ինքնասպանության փորձ է կատարել:

1.6. 2014թ. նոյեմբերի 11-ին, ժամը 11.00-ի սահմաններում, երբ Հակոբ Բոշյանը գտնվել է ինոն տանը (ք. Վանաձոր Աբովյան 28) իրենց տուն են եկել ոստիկանության աշխատակիցներ և հետաքրքրվել են իր աղջկա գտնվելու վայրի վերաբերյալ, ինքն էլ հայտնել է, որ աղջիկը Երևանում է: Ոստիկանության մի քանի աշխատակիցներ սկսել են խուզարկել իրենց բնակարանը, իսկ նրանցից Թորոսյան ազգանունով աշխատակիցը իրեն տարել է ոստիկանության Տարոնի բաժին և մինչև ժամը 16.00-ն պահել այնտեղ: Այդ ընթացքում Թորոսյանը և մյուս աշխատակիցները հայինել են իրեն, հարցրել են, թե ուր է աղջիկը, և ասել են, որ մինչև աղջիկը չներկայանա, իրեն բաց չեն թողնի: Հեռախոսը վերցրել են իր ձեռքից և չեն թույլատրել, որ հեռախոսազնությունը կատարի, միայն շատ խնդրելուց հետո են թույլատրել և նա զանգահարել է իր տնօրենին ու հայտնել, որ չի կարող աշխատանքի դուրս գալ:

2. Բոշյանին մի քանի ժամ առանց որևէ իրավական հիմքի և առանց որևէ կերպ այդ փաստն արձանագրելու, փաստացի անազատության մեջ պահել են ոստիկանության ինչոր աշխատասենյակում, որից հետո իրեն վերադարձել են հեռախոսը և ասել են, որ զնա տուն, իսկ երբ աղջիկը վերադառնա, պարտավորեցնի նրան ներկայանալ ոստիկանություն: Ինքը քայլելով մոտ 25 րոպեում հասել տուն և տեսել, որ ոստիկանները դեռևս խուզարկում են իրենց տունը:

Երեկոյան Ա. Բոշյանը վերադարձել է տուն և իրենց տուն են զնացել ոստիկանության երկու աշխատակիցներ և Ա. Բոշյանին տարել են ոստիկանություն: Այդ օրը, մինչև ժամը 03:00-ն, սպասել են ոստիկանությունում, որից հետո Անիի հետ վերադարձել են տուն: Հ. Բոշյանը մի քանի օր հետո տեղեկացել է, որ դստեր նկատմամբ ոստիկանության աշխատակիցները 11.11.2014թ. ճնշումներ են գործադրել, որի արդյունքում վերջինս ինքնախոստովանական ցուցմունք է տվել:

## 2. Գործի դատավարական նախապատմությունը.

2.1. 2014 նոյեմբերի 21-ին Անի և Հակոբ Բոշյանները իրենց իրավունքների պաշտպանության համար դիմումներ են ներկայացրել Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի զրասենյակ (այսուհետ՝ կազմակերպություն) 22 ոստիկանության Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժնի աշխատակիցների կողմից Ա. Բոշյանի և Հ. Բոշյանի նկատմամբ դրսնորած ապօրինությունների վերաբերյալ<sup>1</sup>:

1. դիմումների բովանդակությունը ներկայացված է սույն դիմումի դեպքի նկարագրության բաժնում 1.1. և 1.2. կետերում:

2.2. 2014թ. նոյեմբերի 26-ին Կազմակերպության կողմից ՀՀ գլխավոր դատախազություն և ՀՀ հատուկ քննչական ծառայություն է ներկայացվել հանցագործության մասին հաղորդում:

2.3. 2014թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում պաշտոնական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է թիվ 62229814 քրեական գործը:

2.4. 2015թ. հունվարի 14-ին Ա. Բոշյանը թիվ 62229814 քրեական գործով ճանաչվել է տուժող:

2.5. 2015թ. ապրիլի 3-ին Արայիկ Զայսանը և Արթուր Սաքոնցը ճանաչվել են տուժող՝ Ա. Բոշյանի ներկայացուցիչներ:

2.6. 2015թ. փետրվարի 2-ին, այնուհետև 2015թ. ապրիլի 4-ին Հ. Բոշյանի կողմից միջնորդություն է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Ն. Բարսեղյանին (այսուհետ՝ նախարարնություն իրականացնող մարմին), իրեն տուժող ճանաչելու պահանջի մասին: Հ. Բոշյանը միջնորդությունը պատճառաբանել է նրանով, որ ոստիկանության աշխատակիցներն իրեն ապօրինի տարել են ոստիկանություն, մի քանի ժամ ապօրինի պահել անազատության մեջ, սեռական բնույթի հայիոյանքներ տալով և նվաստացնելու նպատակով վիրավորել են նրա արժանապատվությունը, այնուհետև ազատ են արձակել:

2.7. 2015թ. փետրվարի 12-ին և ապրիլի 7-ին նախարարնությունն իրականացնող մարմինը գրությամբ հայտնել է, որ ներկայացված միջնորդությունը կցվել է գործին և միջնորդության քննարկումը հետաձգվել է մինչև դրա վերաբերյալ որոշում ընդունելու համար եական հանգամանքների պարզումը:

2.8. 2015թ. ապրիլի 16-ին նախարարնություն իրականացնող մարմնի կողմից կայացվել է որոշում նախորդ՝ 2.6. և 2.7. կետերում նշված միջնորդությունները մերժելու մասին:

2.9. 2015թ. ապրիլի 17-ին նախարարնություն իրականացնող մարմնի կողմից կայացվել է որոշում թիվ 62229814 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարձելու մասին<sup>2</sup>:

### 3. Դիմումի իրավական հիմնավորումը և պահանջը.

3.1. 2015թ. ապրիլի 17-ին ՀՀ ՀՔԾ քննիչ Ն. Բարսեղյանի կողմից կայացվել է որոշում քրեական գործով վարույթը կարձելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին: Կայացված որոշման ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ նախարարնության մարմնի կողմից ձեռնարկված միջոցառումները կատարվել են թերություններով և նրա կողմից օբյեկտիվորեն չեն գնահատվել գործում առկա ապացույցները:

| 2. Որոշումը ստացվել է 2015թ. ապրիլի 23-ին, տես կից ներկայացվող 2-րդ փաստաթուղթը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածում ամրագրված է, որ դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ:

Քրեական դատավարության օրենսգրքում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածում սահմանված է, որ ապացույցումը, գործի օրինական հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը, գնահատելն է:

Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռք բերման աղյուրներն ստուգելու միջոցով<sup>3</sup>: Իսկ նույն օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ քննիչը, դեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում է ապացույցների համակցության մեջ, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իր ներքին համոզմամբ:

3.1.1. Սույն գործի շրջանակներում նախաքննության մարմինը ձեռքի տակ ունենալով՝ Անի Բոշյանի, Հակոբ Բոշյանի, Բավական Խաչատրյանի և ոստիկանության աշխատակիցներ Վազգեն Թորոսյանի, Անի Գաբրիելյանի, Կարեն Մուրադյանը, Արման Գալստյան, Հովսեփ Հովսեփյանի, Էրիկ Շարմազանովի և Արմեն Դերձյանի կողմից տրված իրարամերժ ցուցմունքները, առանց պատշաճ պատճառաբանությունների արժանահավատ է համարել ոստիկանության աշխատակիցների կողմից տրված ցուցմունքները, իսկ Անի Բոշյանի, Հակոբ Բոշյանի և Բավական Խաչատրյանի ցուցմունքները այն մասին, որ Անի և Հակոբ Բոշյանները ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել են անմարդկային վերաբերմունքի և անօրինական պահվել անազատության մեջ, արժանահավատ չի համարվել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ռամսահայի գործով վճռի 326-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը «(...) ոստիկաններ Բրոնսը և Բալստրան հարցաքննվել են միայն դեպքից մի քանի օր անց և այդ ժամանակահատվածում նրանք հնարավորություն են ունեցել պատահարը քննարկել միմյանց և այլոց հետ»:

3. Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 126:

Ուամսահայի գործով վճռի 330-րդ կետում սահմանված է. «(... ) ոստիկաններ Բրոնսը և Բալստրան դեպքից հետո չեն պահպել իրարից մեկուսի և չեն հարցաքննվել զրեյե երեք օր (...): Չնայած, (...) չկա որևէ ապացույց առ այն, որ նրանք գաղտնի համաձայնության են եկել միմյանց կամ Ամստերդամի ոստիկանական ուժերի իրենց գործընկերների հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան բայլեր, հանդիսանում է նախաքննության պատշաճության էական թերություն<sup>4</sup>»:

Սույն պարագայում նախաքննության շրջանակներում չեն ձեռնարկվել այնպիսի միջոցառումներ, որոնք կարող էին բացառել ոստիկանության աշխատակիցների՝ մինչև ցուցմունքներ տալը նախապես պայմանավորվելը:

3.1.2. Նախաքննության մարմինը քրեական գործի վարույթը կարգելու մասին որոշման 10-րդ էջի 2-րդ պարբերությունում անդրադառնալով Հ. Բոշյանի ոստիկանությունում գտնվելու հանգամանքին հանգել է հետևյալ հետևողականը «Հատկանշական է այն, որ Հ. Բոշյանը հայտնել է, որ ինքը ոստիկանության աշխատակիցներին բաժնից դուրս գալու ցանկություն չի հայտնել քանի, որ իրեն ասել էին, որ մինչև աղջիկը չներկայանա իրեն բաց չեն թողնի, սակայն վերջինս չի հստակեցրել, թե նման պայմաններում ինչպես է ստացվել, որ առանց Ա. Բոշյանի ներկայանալու ինքը հեռացել է ոստիկանությունից»:

Այսպիսով, նախաքննության մարմինը ոստիկանության շենքը նույնականացրել է գրուանքի և ժամանցի վայրի հետ, որտեղ քաղաքացիները ըստ իրենց ցանկության կարող են այցելել, մնալ աշխատասենյակում ինչքան ցանկանան, սուրճ խմել և ըստ իրենց ցանկության թողնել ոստիկանության բաժինը:

Նման մեկնաբանությունը որևէ իրավական հիմք չունի և չի համապատասխանում ոչ միայն իրականությանը, որի մասին ցուցմունքում նշել է Հ. Բոշյանը, այլև տարրական ռողամտությանը:

3.1.3. Նախաքննության մարմնի կողմից որևէ քննություն չի իրականացվել՝ Ա. Բոշյանի և առերես հարցաքննվող Վ. Թորոսյանի, Ա. Գաբրիելյանի, Է. Շարմազանովի, Ա. Գալստյանի և Հ. Հովսեփյանի ցուցմունքների միջև ակնհայտ հակասությունները պարզելու ուղղությամբ, որոնք վերաբերվում էին Ա. Բոշյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից կիրառված ապօրինությունների տեղի (աշխատասենյակի), հետաքննչական գործողությունների կատարման ծավալի, տեսակի, հետաքննչական բաժնից քննչական բաժին տեղափոխելու հանգամանքների:

Նախաքննության մարմինը որոշումը ընդունել է առերես հարցաքննություններից մի քանի օր հետո այն դեպքում երբ տվյալ առերես հարցաքննությունների ժամանակ բացահայտված հակասություններից անմիջապես հետո կարծ ժամանակ անց

4. Եվրոպական դատարանի 15 մայիսի 2007 թ. գանգատ թիվ 52391/99 Ramsahai and others v. The Netherlands գործ:

անհրաժեշտ էր այդ հակասությունների վերաբերյալ իրականացնել անհրաժեշտ քննչական գործողություններ:

Այսպիսով, նախաքննության մարմինը չիրականացնելով անհրաժեշտ քննություն ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներում առկա հակասությունների պարզաբանման ուղղությամբ, որի համար անհրաժեշտ էր որոշակի ժամանակ և քննչական գործողություններ, դրանք ի հայտ գալուց հետո օրեր անց, որոշում է կայացնում քրեական հետապնդում չիրականացնելու և վարույթը կարձելու մասին, նման շտապողականությունը հիմք է տալիս պնդելու, որ նախաքննություն իրականացնող մարմնի կողմից չի ապահովվել բազմակողմանի, լրիվ և օբեկտիվ քննության սկզբունքների իրականացումը, այլ այն նպատակ է հետապնդել կոծկելու ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված հանցագործությունը, շուտափույթ դադարեցնել գործի քննությունը ապօրինի որոշման կայացման միջոցով։ Հետևաբար նախաքննությունն իրականացնող մարմնի գործողությունները ուղղած չեն եղել վատ վերաբերմունքի դեպքի հանգամանքների լրիվ և օբեկտիվ պարզմանը։

3.2. Քրեական գործի վարույթը կարձելու մասին որոշման 5-րդ էջի 7 պարբերությունում՝ Ռ. Թորոսյանի ցուցմունքում նշվում է՝ «ուսւոյն օրը երեկոյան, հանձնարարվել է օպերլիազորին զնալ և պարզել, թե Ա. Բոշյանն արդյոք վերադարձել է թե ոչ, և տեղեկանալով, որ վերադարձել է, հանձնարարել է նրան բերման ենթարկել ոստիկանություն»։

Համաձայն՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված 3-րդ մասի «ոստիկանության ծառայողները մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում անմիջապես պարտավոր են նրա համար մատշելի և հասկանալի լեզվով ներկայացնել սահմանափակման հիմքերն ու պատճառները, ծանոթացնել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աջակցել իրավունքների իրացմանը»։

Մինչեռ, ոստիկանության աշխատակիցները Ա. Բոշյանին բերման ենթարկելիս չեն ներկայացրել անձին բերման ենթարկելու մասին որոշում, ինչպես նաև չի ներկայացվել նրա իրավունքները և պարտականությունները։

Սույն փաստի վերաբերյալ նախաքննության շրջանակներում չեն կատարվել քննչական այնպիսի գործողություններ, որով կպարզվեր վերը նշված փաստական հանգամանքները։

Մինչեռ, ՀՀ Կառավարության 14 հունիսի 2007 թվականի N 818-Ն որոշմամբ Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին որոշման N 1 հավելվածի 1-ին մասի 1 կետի համաձայն՝ մարդն իրավունք ունի սահմանափակման պահից իմանալու իր իրավունքների սահմանափակման պատճառները, հիմքերը, իր իրավունքները սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը։ Համաձայն՝ նույն որոշման N 2 հավելվածի 2-րդ մասի մարդու իրավունքը

սահմանափակելիս ոստիկանության ծառայողը ներկայանում է՝ հայտնելով իր պաշտոնը, կոչումը և ազգանունը:

Սույն դեպքում նախաքննություն իրականացնող մարմինը որոշում կայացնելիս չի անդրադարձել վերը թվարկված խախտումներին, որոնք հիմք են հանդիսանում ոստիկանության աշխատակիցներին պատասխանատվության ենթարկելու համար:

3.4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով»:

Բերման ենթարկելը դատավարական հարկադրանքի միջոց է, որի կիրառման դեպքերը, կարգն ու հիմքերը սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն՝ բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի բննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, (...) հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու է՝ նրա նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, (...):

Բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա:

Սույն պարագայում վերը վկայակոչված իրավական ակտի համաձայն բերման ենթարկելու պայմանները խսպառ բացակայել են, սակայն չնայած այդ հանգամանքին Ա. Բոշյանը ենթարկվել է բերման: Հատկանշական է, որ նույն քրեական գործի նախաքննության ընթացքում Անի Բոշյանը մինչ այդ արդեն մի քանի անգամ որպես վկա հարցաքննվելու համար առանց որևէ խոչընդոտներ հարուցելու ներկայացել է նախաքննական մարմին և տվել համապատասխան ցուցմունքներ:

Ավելին՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն ստուգվել այն փաստական հանգամանքերը, որ Անի և Հակոբ Բոշյանները, ինչպես նաև Բավական Խաչատրյանը իրենց ցուցմունքներում և բացատրություններում նշել են այն մասին, որ 11.11.2014թ. ժամը 17:00-ի սահմաններում Ա. Բոշյանը Երևանից վերադառնալուց հետո ինքնակամ ներկայացել է ոստիկանություն, Բ. Խաչատրյանը զանգահարել է Ա. Դերձյանին, որը հայտնել է, որ քննիչը տեղում չի գնացեք տուն սպասեք ես կզանգեմ կզար:

Նման պայմաններում բերման ենթարկելու իրավական հիմքն խսպառ բացակայում է, որը նախաքննության մարմնի կողմից իրավական գնահատականի չի արժանացել, չեն ըննարկվել այն հանգամանները, թե Ա. Բոշյանին բերման ենթարկելը եղել է իրավաչափ, հետապնդել է արդյոք իրավաչափ նպատակ, թե եղել է ոստիկանության կողմից ծրագրված այնպիսի գործողությունների մի մասը, որոնք ուղղված են Ա. Բոշյանից ստանալու խոստովանական ցուցմունքներ:

3.5. Նախաքննության մարմնի կողմից իրավական գնահատական չի տրվել այն հանգամանքին, որ Ա. Բոշյանը 11.11.2014թ. ոստիկանության բաժին է քերման ենթարկվել ժամը 18:00-ին և այնտեղից դուրս է եկել միայն զիշերը ժամը 03:00-ին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 188<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «քննչական գործողությունների իրականացումը զիշերային ժամերին չի թույլատրվում, բացառությամբ անհետաձելի դեպքերի»:

Այս դեպքում քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերը նշված իրավանորմի լույսի ներքո պատճառաբանված չէ, չկա պատճառաբանություն Ա. Բոշյանի նկատմամբ զիշերը քննչական գործողություններ կատարելու մասին, որը հիմք է տալիս պնդելու, որ նրան երեկոյան ժամը 22:00-ից մինչ 03:00 պահել և քննչական գործողություններ են կատարել ապօրինի նպատակ ունենալով արգելված վերաբերմունքի արդյունքում ամեն գնով ստանալու խոստովանական ցուցմունքներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից, (.....) ավելի»:

Սույն դեպքում 18.11.2014թ. Ա. Բոշյանը Հ. Հովսեփյանի կանչով ներկայացել է քննչական բաժին ժամը 18:00-ի սահմաններում, ենթարկվել է հարցաքննության, որի ընթացքում վերջինիս առաջադրվել է մեղադրանք և ոստիկանությունից դուրս է եկել միայն 23:30-ի սահմաններում, որը զերազանցում է վերը նշած իրավանորմով սահմանված հարցաքննության համար նախատեսված 4 ժամը:

Այս դեպքում ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Ն. Բարսեղյանը որոշում կայացնելիս չի անդրադարձել վերը թվարկված խախտումներին, որոնք հիմք են հանդիսանում ոստիկանության աշխատակիցներին պատասխանատվության ենթարկելու համար:

3.6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքների կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով:

Այսինչ, ոստիկանությունում և քննչական բաժնում գտնվելու ամբողջ ընթացքում ոստիկանության բաժնում եղած ոստիկանության և քննչական կոմիտեի աշխատակիցներ՝ Վ. Թորոսյանը, Ա. Գալստյանը, Է. Շարմազանովը, Ա. Գաբրիելյանը և Հ. Հովսեփյանը սպառնալիքների, վիրավորական արտահայտությունների, ապօրինի բերման ենթարկելու, նվաստացնող մեթոդներով անձնական խուզարկության և ապօրինի նկարահանման միջոցով վերջինից կորզել են ցուցմունքներ:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունը որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

Սահմանադրության 47-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը պարտադիր է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր մարմինների և անձանց համար:

Սույն դեպքում քրեական գործի վարույթը կարգելու մասին որոշման հիմքում բացառապես դրվել են Ա. Բոշյանի նկատմամբ հոգեբանական ճնշումներ գործադրած ոստիկանության և քննչական կոմիտեի աշխատակիցների ցուցմունքները, որոնցից ոմանք իրաժարվել են տուժողի ներկայացուցչի հարցադրումներին պատասխանելուց պատճառաբանելով, որ իրենց կողմից տրված պատասխանը հետազայում կարող է իրենց դեմ օգտագործվել, որը ապացուցում է այն հանգամանքը, որ նրանք այդ ժամանակվանից իրենց զգացել են մեղադրյալի կարգավիճակում, որը նույնպես նախաքննության մարմնի կողմից չի գնահատվել:

3.7. 2014 թվականի նոյեմբերի 11-ին՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցները Հ. Բոշյանին ժամը 11:00-ից 12:00-ի սահմաններում իր բնակարանից իրենց հետ տարել են Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժին, որտեղ թվով 5 ոստիկաններ նրան սկսել են սեղական բնույթի հայինանքներ տալ և սպառնացել են, որ եթե իրենց չհայտնի Ա. Բոշյանի գտնվելու վայրը, կծեծեն: Տվյալ աշխատասենյակում նրան պահել են մոտավորապես 2 ժամ, որի ընթացքում ոստիկանության աշխատակիցները սպառնացել են, որ իրենց կապերի միջոցով կզրկեն նաև աշխատանքից:

Ոստիկանությունում գտնվելու ժամանակահատվածում Հ. Բոշյանը փորձել է զանգահարել իր տնօրենին որպեսզի հայտնի աշխատանքի չներկայանալու պատճառների մասին, սակայն չի կարողացել խոսքը ավարտել, քանի որ ոստիկանության աշխատակիցները հեռախոսը ձեռքից խլել են և թույլ չեն տվել այլ զանգեր կատարել: Երկու ժամ տվյալ աշխատասենյակում պահելուց հետո տեղափոխել են հարակից աշխատասենյակ: Այնուհետև, ժամը 16:00-16:30-ի սահմաններում դիմացի սենյակում նստած ոստիկանության աշխատակիցը ինչ-որ հեռախոսազնություն է ստացել որից հետո վերադրել են քջային հեռախոսը և ասել են, որ զնա դատերը վերցնի և զա ոստիկանություն: Նշված ժամանակահատվածում ոստիկանության աշխատակիցների կողմից որևէ փաստաթղթեր չեն լրացվել:

Սույն պարագայում ոստիկանության աշխատակիցները Հ. Բոշյանին անօրինական կարգով ազատությունից հարկադրաբար զրկել են շուրջ 4 ժամ 40 րոպե:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝

1) անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից.

2) անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը.  
3) օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով.

4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով. 5) (...).

6) վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեսոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով. (...):

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

Սույն պարագայում ոստիկանության աշխատակիցները Հ.Բոշյանին անազատության մեջ պահելով շուրջ 4 ժամ 40 րոպե և չունենալով ՀՀ սահմանադրության 16-րդ հոդվածում թվարկված հիմքերից որևէ մեկը, կատարել են հանցագործություն:

3.5. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

Նախաքննություն իրականացնող մարմինը չի ձեռնարկել համապատասխան միջոցներ հաղորդման մեջ նշված հանգամանքները պարզելու համար մասնավորապես.

3.5.1. Չեն հարցաքննվել 11.11.2014թ. Բոշյանների ընտանիքին պատկանող Վանաձոր քաղաքի Աբովյան 28 հասցի բնակարանում խուզարկության ժամանակ ներկա գտնված ընթերականները, որոնք կարող էին ցուցմունք տալ Հ. Բոշյանին բնակարանից ոստիկանություն տանելու պատճառաբանության, ժամանակի և գործով էական նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ:

3.5.2. Չեն իրականացվել քննչական գործողություններ պարզելու համար Ա. Բոշյանի մինչ բերման ենթարկվելը ոստիկանություն այցելելու և վերջինիս մոր՝ Բ. Խաչատրյանի և Ա. Դերձյանի հեռախոսազնոցի խսկությունը ճշտելու ուղղությամբ:

3.5.3. Չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ պարզելու համար Ա. Բոշյանի այն ենթադրությունները, որ իր խուզարկության ժամանակ ներկա գտնված Հեղինե Ավետիսյանը և Հեղինե Խառատյանը ոստիկանության աշխատակիցներ չեն եղել:

3.5.4. Նախաքննության շրջանակներում չեն ձեռնարկվել այնպիսի միջոցառումներ, որոնք կարող էին բացառել ոստիկանության աշխատակիցների՝ մինչև ցուցմունքներ տալը նախապես պայմանավորվելը:

3.5.5. Նախարննության շրջանակներում չի առգրավվել և վերծանվել Վանաձոր քաղաքի Տարոնի բաժանմունքում տեղադրված տեսախցիկների միջոցով ֆիքսված ձայնագրությունները, որոնք կարող էին հիմնավորել Ա. Բոշյանի, Հ. Բոշյանի, Բ. Խաչատրյանի կողմից վկայակոչած մի շարք հանգամանքներ:

3.5.6. Վարույթն իրականացնող մարմնի կողմից, գործի քննության ընթացքում չի նշանակվել դատահոգերանական և դատահոգերուժական փորձաքննություն Ա. Բոշյանի կողմից ինքնասպանության փորձ կատարելուն հանգեցրած հանգամանքները և շարժառիթները պարզելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածները.

#### ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

Վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Ն. Բարսեղյանի 2015թ.ապրիլի 17-ի թիվ 62229814 քրեական գործով վարույթը կարձելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը և գործն ուղարկել նախարննության:

#### Կից ներկայացվում է


1. 17.04.2015թ. քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարձելու մասին որոշման պատճենը,
2. 17.04.2015թ. քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարձելու մասին որոշումը 23.04.2015թ. ստանալը հավաստող փոստային ծրարի պատճենը:

Դիմողներ՝

 Ա. Բոշյան

 Հ. Բոշյան

 Վ. Արյունյան Ա. Սարունց

 Ա. Զալյան

30. 04. 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
**ԳԼԽԱՎՈՐ  
ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ**



GENERAL PROCURACY OF THE  
REPUBLIC OF ARMENIA

ГЕНЕРАЛЬНАЯ ПРОКУРАТУРА  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

375010, ք. Երևան, վ. Սարգսյանի փ. 5

375010, ք. Երևան, պլ. Վ. Սարգսյան

5 V. Sargsyan Str., Yerevan 375010

№ 12/42/3118-15

«11 » 05 2004 թ.

**Թիվ 62229814 քրեական գործով փուժող  
Անի Բոշյանին և Հակոբ Բոշյանին  
(Ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59 )**

Ուղարկում եմ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված թիվ 62229814 քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 17.04.2015թ. կայացված որոշման դեմ բերված ձեր բողոքը մերժելու մասին որոշումը:

Հայտնում եմ, որ որոշման հետ համաձայն չինելու դեպքում, որոշումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում այն կարող եք բողոքարկել դատարան:

Առդիր՝ որոշումը՝ 10 թերթ:

**Հարկապես կարևոր գործերով քննության  
վարչության ավագ դատախազ, արդարադատության  
երկրորդ դասի խորհրդական՝**

Գ. Գևորգյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
բողոքը մերժելու մասին

11.05.2015թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության ավագ դատախազ Գ.Վ. Գևորգյանս, ստուգելով ՀՀ ոստիկանության Տարոնի բաժնի առանձին պաշտոնատար անձանց կողմից բռնությամբ գուգորդված պաշտոնեական լիազորությունների անցում կատարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված թիվ 62229814 քրեական գործի նյութերն ու քննարկելով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 2015 թվականի ապրիլի 17-ի որոշման դեմ տուժող Անի Բոշյանի, տուժողի ներկայացուցիչներ՝ Արթուր Սաքոնցի և Արայիկ Զայյանի, ինչպես նաև Հակոբ Բոշյանի բողոքը.

**ՊԱՐՁԵՑԻ**

2014թ. թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ հատուկ քննչական ծառայություն է ստացվել Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքոնցի գրությունն այն մասին, որ կազմակերպություն է դիմել Վանաձոր քաղաքի բնակչութի Անի Հակոբի Բոշյանը՝ հայտնելով, որ 2014թ. նոյեմբերի 11-ին ոստիկանության աշխատակիցների ուղեկցությամբ զնացել է ոստիկանության Տարոնի բաժնին, որտեղ պաշտոնատար անձինք իր նկատմամբ կիրառել են հոգեբանական ճնշումներ, նսեմացրել են արժանապատվությունը՝ ծաղրել և անձնական բնույթի վիրավորանքներ հասցրել. ինչի արդյունքում ինքը գրել է իրականությանը չհամապատասխանող ցուցմունք: Այնուհետև, դրանից դրդված, 2014թ. նոյեմբերի 23-ին կատարել է ինքնասպանության փորձ:

Անի Բոշյանն իր հերթին հանցագործության մասին նույնաբովանդակ հաղորդում և բացատրություն է տվել:

Դեպքի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 04.12.2014թ. հարուցվել է թիվ 62229814 քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով:  
17.04.2015թ. ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ն.Բարսեղյանի կողմից որոշում է: Կայացվել քրեական հետապնդում չիրականացելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին՝ ոստիկանության և ՀՀ քիչական կոմիտեի աշխատակիցների գործողություններում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

04.05.2015թ. տուժող Անի Բոշյանը, տուժողի ներկայացուցիչներ՝ Արթուր Սաքոնցը և Արայիկ Զայյանը, ինչպես նաև Հակոբ Բոշյանը բողոք են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ վերը նշված որոշումը վերացնելու պահանջով՝ հայտնելով, որ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը անհիմն է, չի կատարվել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն:

Ստուգելով քրեական գործի նյութերը և քննարկելով բողոքը՝ գտնում եմ, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քրեական գործով նախաքննությունը կատարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ, կայացված որոշումը օրինական և հիմնավոր է. իսկ բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանություններով.

Անի Բոշյանը ճանաչվել է տուժող և ցուցմունք է տվել այն մասին, որ 2014թ. նոյեմբերի 11-ին, երբ անձնական գործերով գտնվել է Երևան քաղաքում, իրեն է զանգահարել մայրը՝ Բավական Խաչատրյանը, և հայտնել, որ ոստիկանության Տարոնի բաժնի աշխատակիցներն այցելել են իրենց բնակարան, խովարկել են բնակարանը, իսկ մի քանի այլ աշխատակիցներ իր հորը՝ Հակոբ Բոշյանին, տարել և մի քանի ժամ պահել են ոստիկանությունում, ապա պահանջել է, որ ինքն անմիջապես վերադառնա Վանաձոր:

Նոյն օրը՝ ժամը 17.00-ի սահմաններում, արդեն գտնվել է տանը, երբ իրենց բնակարան են այցելել ոստիկանության երկու աշխատակիցները և իրեն տարել են ոստիկանության Տարոնի բաժին։ Մայրը նոյնպես նստել է ոստիկանների ավտոմեքենան, իսկ հայրը իրենց մեքենայով է գնացել։

Բաժնում ոստիկանները կազմել են ինչ-որ փաստաթյուր, որոնք ինքը ստորագրել է, և իրեն տարել են բաժնի պետի տեղակալ Թորոսյանի աշխատատենյակը, որտեղ վերջինս իր հասցեին անպարկեց արտահայտություններ է արել և մեղադրել պոռնկագրական նյութեր տարածելու մեջ։ Ինքն ասել է, որ նման արարք չի կատարել, սակայն իրեն ոչ ոք չի լսել, և շարունակվել են վիրավորանքներն իր և իր ընտանիքի հասցեին։

Այդ ժամանակ Թորոսյանը հանձնարարել է աշխատակիցներին, որ նկարահանեն իրեն, որից հետո իրեն բերման ենթարկած ոստիկանության աշխատակիցը բջջային հեռախոսով նկարահանել է իրեն տարրեր դիրքերից, իսկ ինքը հայտնել է իր տվյալները և քրեական օրենսգրքի այն հոդվածը, որի կասկածանքով իրեն բերման են ենթարկել։

Նկարահանումից հետո կրկին գնացել են Թորոսյանի աշխատատենյակ, այնտեղ են եկել նաև երեք աղջիկներ, որոնք իր կարծիքով եղել են ոստիկանության աշխատակիցներ։ Թորոսյանը հանձնարարել է, որ իրեն խուզարկեն, որից հետո այդ աղջիկները Թորոսյանի աշխատատենյակի վերջնամասում գտնվող հանգստի սենյակում խուզարկել են իրեն։

Նրանցից մեկը պահանջել է, որ ինքն ամբողջությամբ հանի հազուատը՝ ասելով, որ իր մարմնի վրա դաշվածքներ և սպիներ է փնտրում։ Հազուատը հանելուց հետո պահանջել է, որ կը անստի, որպեսի պարզեն՝ ներքին օրգաններում արդյոք ինչ-որ իրեր թաքցնում է, թե ոչ։

Խուզարկության ավարտից հետո Թորոսյանը վերադարձել է և միասին գնացել են բաժնի պետ Շուշանյանի աշխատատենյակ, որտեղ կրկին շարունակվել են նսեմացնաներն ու վիրավորանքները։ Քիչ անց այնտեղ է եկել նաև քննչական բաժնի պետ Գալստյանը, ով, միանալով Թորոսյանին և Շուշանյանին, սպառնացել է, որ իրեն կծերբակալեն և 72 ժամ պահելուց հետո կուղարկեն կանանց գաղութ։ Իր ինքնազգացողությունը վատացել է, և դեղորայք վերցնելու համար ցանկացել է տեսնել ծնողին, սակայն իրեն չեն թույլատրել՝ ասելով, որ եթե այդ պահին առանց ծնողի չի դիմանում, ինչպես պետք է դիմանա գաղութում։

Տեսնելով, որ սպառնալիքների և ճնշումների ազդեցությամբ չեն կարողանում համոզել իրեն խոստավանել իր կողմից չկատարված հանցագործությունը, Գալստյանը խնդրել է, որ Թորոսյանն ու Շուշանյանը դուրս գան սենյակից, որից հետո սկսել է իրեն համոզել, որ գրի խոստովանական ցուցմունք՝ ասելով, որ այդ մասին ոչ ոք չի իմանա, գործում իր անվան փոխարեն այլ տվյալներ կլրացվեն, հետագայում ինքը դատարանում կվճարի տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով, և ամեն ինչ կավարտի։

Տեսնելով, որ այդտեղից դուրս գալու որևէ այլ հնարավորություն չունի՝ համաձայնվել է ցուցմունք տալ և շուտ հեռանալ։ Այդ ժամանակ Գալստյանի հետ գնացել է վերջինիս աշխատատենյակ, և միջանցքում հանդիպել են Շուշանյանին, ում Գալստյանը ներկայացրել է որպես իր քավորի։ Միջանցքով քայլելու ժամանակ դիմացի պատին առկա ապակու արտացոլանքի մեջ տեսնել է, որ Շուշանյանը իր հետևից ծերք շարժումով ինչ-որ ժեստ է արել, որը նմանվել է սեռական բնույթի հայեցականի։ Դա նկատել է նաև Գալստյանը։

Գալստյանի աշխատատենյակ է եկել քննիչ Հովսեփի Հովսեփյանը, ներկայացել է որպես գործը քննող քննիչ, Գալստյանը նրան ասել է, որ ինքը կզրի խոստավանական ցուցմունք, և միասին գնացել են քննիչի աշխատատենյակ։

Քննիչը իրեն է տվել ինչ-որ փաստաթյուր, որոնք ինքը առանց կարդալու ստորագրել է, և սկսվել է իր հարցաքննությունը։ Քննիչը իրեն թելադրել է ցուցմունքը, և ինքը գրել է, թե, իբր, պատրաստել և համացնեցի միջոցով տարածել է Մաղենա Սահակյանի և Նարինե Նավասարդյանի պոռնկագրական բնույթի նկարները։ Հարցաքննության ընթացքում Գալստյանը պարբերաբար մտել է քննիչի աշխատատենյակ, ինչ-որ բան է խոսել քննիչի հետ և հեռացել։ Իր հարցաքննությունը տևել է մի քանի ժամ, որի ընթացքում մի քանի անգամ քննիչի հեռախոսով զանգել է ծնողներին։

Գալստյանն ու Հովսեփյանն իրեն ասել են, որ ոչ ոքի, այդ թվում՝ իր ընտանիքի անդամներին չասի, թե ինչ ցուցմունք է գրել:

Հարցաքննության ավարտից հետո՝ ժամը 03.00-ի սահմաններում, քննիչի հետ միասին դուրս է եկել բաժնից:

Ծուրջ 7 օր անց իրեն զանգել է Հովսեփյանը և պահանջել է անհապաղ ներկայանալ քննչական բաժին։ Բաժնում քննիչն ու Գալստյանն իրեն հարցուվործ են արել ոմն Լիաննա Սուրառյանի վերաբերյալ, թե ինչ կապ կա իրենց միջև, քանի որ վերջինիս համակարգչից հայտնաբերվել են նոյն անձանց վերաբերյալ պոռնկագրական բնույթի լուսանկարներ։ Ինքը հայտնել է, որ այդպիսի մարդու չի ճանաչում, որևէ կապ չունի նրա հետ, և հրաժարվել է գրել, որ այդ լուսանկարները միասին են կազմել և տարածել։ Այնուհետև քննիչի աշխատասենյակում իրեն մեղադրանք է առաջարկվել, կրկին ստորագրել է փաստաթղթեր, որոնց բովանդակությանը չի ծանոթացել, և քննիչի թելադրանքով գրել է նախորդ ցուցմունքի բովանդակությամբ ցուցմունք։ Քննիչը որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման օրինակ իրեն չի տվել՝ պատճառաբանելով, որ կամ այն կլորցինի, կամ ինչ-որ մեկը կկարդա:

Հետազայում գիտակցելով, թե ինչ ծանր հանցանք կատարելու համար է մեղադրվում, և որ այդ արարքները ինքը չի կատարել, այդ ամենը գրել է ճշշումների և նվաստացումների արդյունքում, իր անունը և բարի համբավը կիսայտառակի ամբողջ քաղաքում՝ կատարվածի մասին պատմել է մայրիկին, որից հետո, տեսնելով ծնողի ծանր ապրումները, որոշել է վերջ տալ լյանքին և 2014թ. նոյեմբերի 23-ին դեղահաբերի մեջ քանակություն ընդունելու միջոցով՝ ինքնասպանության փորձ է կատարել։

Ա.Բոշյանի մայրը՝ Բավական Խաչատրյանը, ցուցմունք է տվել այն մասին, որ 2014թ. նոյեմբերի 11-ին, երբ իր դուստրը՝ Անի Բոշյանը, գտնվել է Երևան քաղաքում, իրենց քնակարան են այցելել ոստիկանության Տարոնի բաժնի աշխատակիցները և խուզարկել են իրենց տունը. մինչև խուզարկությունը սկսելով թորոսյան իր ամուսնուն՝ Հակոբ Բոշյանին, տարել է ոստիկանության բաժին, և ժամը 12.30-ից մինչև 16.00-ն նրան պահել են բաժնում։

Այդ ընթացքում ինքը բազմից զանգել է աղջկան, սակայն նրա հեռախոսը անջատված է եղել, իսկ երբ Անին պատասխանել է զանգերին, պահանջել է, որ շտապ վերադառնա Վանաձոր։

Ժամը 17.30-ի սահմաններում Անին արդեն գտնվել է տանը։ Որոշ ժամանակ անց իրենց քնակարան են այցելել խուզարկություն կատարող աշխատակիցներից երկուսը և ասել են, որ Անիին պետք է տանեն ոստիկանություն։ Ինքը Անիի հետ նստել է ոստիկանների ավտոմեքենան, և գնացել են Տարոնի բաժին։

Բաժնում Անիին տարել են թորոսյանի աշխատասենյակ, իսկ ինքը մնացել է միջանցքում, սակայն սենյակի ներսից լսել է Անիի լացի բարձր ձայնը, որոշ ժամանակ անց նրան դուրս են բերել սենյակից՝ որպեսզի նկարահանեն, իսկ թորոսյանը, տեսնելով իրեն, բարկացել է իր վրա, որ միջանցքում չափասի, որից հետո ինքը մտել է իր դասընկերոց՝ Արմեն Դերջանի աշխատասենյակ, ով նոյնպես աշխատել է նոյն բաժնում։

Որոշ ժամանակ մնացել է ոստիկանության մասնաշենքում, հետո իրեն դուրս են հրավիրել ոստիկանությունից։ Մինչև ժամը 01.00-ն տեղեկություն չի ունեցել Անիից, այդ ժամանակ Անին իրեն է զանգել քննիչի հեռախոսից, ինքը բարձրացել է 3-րդ հարկ և տեսել է աղջկան։

Ժամը 03.00-ի սահմաններում Անին դուրս է եկել բաժնից, և գնացել են տուն։ Անին գտնվել է ընկճված, վախեցած վիճակում, ոչինչ չի խոսել, իրենց ոչինչ չի պատմել։

Մի քանի օր անց Անիին կրկին հրավիրել են քննչական բաժին։ Այդ օրը ևս մի քանի ժամ մնացել է քննիչի աշխատասենյակում։ Դրանից հետո մի քանի օր շարունակ Անին գտնվել է ծանր վիճակում, իր հետ չի խոսել, իսկ 2014թ. նոյեմբերի 23-ին դեղահաբեր ընդունելու եղանակով ինքանասպանության փորձ է կատարել, որից հետո իրեն պատմել է, որ 2011թ. նոյեմբերի 11-ին ոստիկանության բաժնում նրա նկատմամբ կատարվել են ապօրինություններ, նսեմացրել են նրա արժանապատվությունը, սպառնացել են, ճնշումներ են գործադրել, որպեսզի խոստովանի իր կողմից չկատարված հանցագործությունը։

Հատկանշական է, որ թես Ա. Բոյջանը նշել է, որ ոստիկանների ապօրինի գործողությունների մասին մայրիկին պատմել է մինչև 23.11.2014թ, սակայն Բ.Խաչատրյանը նշել է, որ այդ ապօրինությունների մասին դուստրն իրեն պատմել է ինքնասապանության փորձ կատարելուց հետո միայն:

Հակոբ Բոյջանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2014թ. նոյեմբերի 11-ին՝ ժամը 11.00-ի սահմաններում, իրենց բնակարան են այցելել ոստիկանության աշխատակիցներ և հետաքրքրվել են իր աղջկա գտնվելու վայրի վերաբերյալ, ինքն էլ հայտնել է, որ աղջիկը երևանում է: Ոստիկանության մի քանի աշխատակիցներ սկսել են խուզարկել իրենց բնակարանը, իսկ նրանցից Թորոսյան ազգանունվա աշխատակիցը իրեն տարել է ոստիկանության Տարոնի բաժին և մինչև ժամը 16.00-ն պահել այնտեղ: Այդ ընթացքում Թորոսյանը և մյուս աշխատակիցները հայինել են իրեն, հարցրել են, թե որ է աղջիկը, և ասել են, որ մինչև աղջիկը չներկայանա, իրեն բաց չեն թողնի: Հեռախոսը վերցրել են իր ձեռքից և չեն թույլատրել, որ հեռախոսազնգեր կատարի, միայն շատ խնդրելուց հետո են թույլատրել զանգահարել է իր տնօրենին և հայտնել, որ չի կարող աշխատանքի դուրս գալ:

Մի քանի ժամ նատել է ինչ-որ սենյակում, որից հետո իրեն վերադարձել են հեռախոսը և ասել են, որ գնա տուն, իսկ երբ աղջիկը վերադառնա, պարտավորեցնի նրան ներկայանալ ոստիկանություն: Ինքը քայլելով մոտ 25 րոպեում հասել տուն և տեսել, որ ոստիկանները դեռևս խուզարկում են իրենց տունը:

Երեկոյան Անին վերադարձել է տուն, իրենց բնակարան են գնացել ոստիկանության երկու աշխատակիցներ և Անիին տարել են ոստիկանություն: Այդ օրը՝ մինչև ժամը 03.00-ն, սպասել են ոստիկանություններում, որից հետո Անիի հետ վերադարձել են տուն: Մի քանի օր հետո տեղեկացել է, որ Անին ինքնասապանության փորձ է կատարել, քանի որ նոյեմբերի 11-ին ոստիկանության բաժնում նրան ճնշել և համոզել են, որ խոստովանական ցուցմունք գրի:

«Ոստիկանության Տարոնի բաժնի պետի տեղակալի Վազգեն Թորոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Լոռու մարզի քննչական վարչության վարույթում համակարգչի միջոցով պոռնկագրական նյութեր տարածելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործերից մեկի շրջանակներում հավաստի տեղեկություններ են ստացվել, որ հանցագործությունը կատարել է Վանաձոր քաղաքի բնակչութիւն Անի Բոյջանը: Ա.Բոյջանին հայտնաբերելու նպատակով 2014թ. նոյեմբերի 11-ին՝ մոտավորապես ժամը 12.00-ին, այցելել է վերջինիս բնակության վայր, սակայն Ա.Բոյջանը տանը չի եղել և իրեն դիմավորել են վերջինիս ծնողները, ապա հայտնել, որ Անին հավանաբար գտնվում է Երևանում: Ինքը հետաքրքրվել է, թե որտեղ է Անիի համակարգիչը, և վերջինիս հայրը՝ Հակոբ Բոյջանը, հայտնել է, որ այն շուրջ երկու ամիս առաջ վնասվել է, և տվել են վերանորոգման: Ինքն առաջարկել է միասին գնալ և տեսնել, թե ում մոտ է համակարգիչը, ապա Հ.Բոյջանի մատնանշած երթուղիով միասին գնացել են Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող ինչ-որ մի տաղավար, որը մատնանշելով՝ Հ.Բոյջանը հայտնել է, որ նշված վայրում է համակարգիչը տվել վերանորոգման, սակայն երբ տվյալ կետի աշխատակիցը հերթել է Հ.Բոյջանի կողմից համակարգիչ հանձնելու հանգամանքը, վերջինս հայտնել է, որ շփոթվել է և այլ խանություն է այն տվել վերանորոգման:

Կրկին Հ.Բոյջանի մատնանշած երթուղիով գնացել են մեկ այլ խանությ, որտեղի հիմնական աշխատակիցը բացակայել է խանութից: Մեկ այլ աշխատակիցից վերցնելով նրա հեռախոսահամարը՝ զանգել ու զրուցել է նրա հետ, վերջինս հայտնել է, որ իրեն նման համակարգիչ չեն տվել, և որ ինքը գտնվում է Սպիտակ քաղաքում:

Խանութի աշխատակիցին խնդրել է այդ հարցը պարզելու նպատակով շտապ վերադառնալ Վանաձոր, իսկ Հ.Բոյջանին առաջարկել է դրսում սպասելու փոխարեն գնալ ոստիկանության Տարոնի բաժին և այնտեղ սպասել, ինչին վերջինս համաձայնել է:

Քանի որ այդ պահին օպերիհագործների մոտ առկա է երել Ա.Բոյջանի բնակարանը խուզարկելու մասին դատարանի որոշումը, ինքը հանձնարարել է օպերիհագործներին սկսել խուզարկությունը:

Բաժնում, իր հիշելով, սուրճ են խմել և որոշ ժամանակ անց բաժին է եկել խանութի աշխատակիցը: Հ.Բոյջանը, տեսնելով խանութի աշխատակիցին, ասել է, որ իրականում խաբել է,

համակարգիչը իրականում վերանորոգման չի տվել, այլ այն առգրավել են ոստիկանության աշխատակիցները:

Ճշտելով, որ իրականում համակարգիչը առգրավվել է մեկ այլ գործի շրջանակներում, Հ.Բոշյանին ասել է, որ գնա տուն, իսկ եթե Ա.Բոշյանը վերադառնա, վերջինիս անմիջապես ուղարկի ոստիկանության Տարոնի բաժին:

Հ.Բոշյանին ոչ ոք չի պարտադրել, որ մնա բաժնում, նա այնտեղ մնացել է իր իսկ ցանկությամբ և ամենաշատը մեկ ժամ մնալու հետո՝ ժամը 14.00-ի սահմաններում, դուրս է եկել բաժնից:

Նոյն օրը՝ երեկոյան, հանձնարարել է օպերիազորին գնալ և պարզել, թե Ա.Բոշյանն արդյոք վերադառնել է, թե ոչ, և տեղեկանալով, որ վերադառնել է՝ հանձնարարել է նրան բերման ենթարկել ոստիկանություն:

Ա.Բոշյանին բերման ենթարկելուց հետո պարզաբանվել են իրավունքները, կազմվել են արձանագրություններ, որից հետո ինքը ծեռնամուս է եղել իգական սեփի երկու ընթերականների և նոյն սեփի ոստիկանին ապահովելու գործընթացին, որպեսզի Ա. Բոշյանին ենթարկեն անձնական խուզարկության: Խուզարկությունից հետո Ա. Բոշյանին նկարահանել են ոստիկանության աշխատակիցները, որի ընթացքում նա հայտարարել է իր տվյալները և քրեական օրենսգրքի այն հոդվածը, որի կասկածանքով բերման է ենթարկվել: Ա.Բոշյանի հետ բոլոր անհրաժեշտ գործողություններն ավարտելուց հետո վերջինս համապատասխան գրությամբ ներկայացվել է քննչական բաժին:

Ինքը Ա.Բոշյանին բաժնի պետի աշխատասենյակ չի տարել, նրա նկատմամբ որևէ ճնշում, սպառնալիք և վիրավորանք չի եղել: Ա.Բոշյանը գտնվել է հանգիստ վիճակում:

Ոստիկանության Տարոնի բաժնի ՊՊԾ դասակի ոստիկան Անի Գաբրիելյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2014թ. նոյեմբերի 11-ին՝ երեկոյան, Թորոյանի կանչով ներկայացել է բաժին և իրականացրել է բերման ենթարկված Անի Բոշյանի անձնական խուզարկությունը, որին մասնակցել են ևս երկու ընթերականներ: Անձնական խուզարկության ընթացքում Ա. Բոշյանն իրեն շատ հանգիստ է պահել, կատարել է իր օրինական պահանջները:

Խուզարկության ընթացքում Ա. Բոշյանը մերկացել է, ինքը ստուգել է, որ վերջինիս մոտ և մարմնի վրա որևէ արգելված իրեր չկան, և ավարտել է խուզարկությունը:

Ոստիկանության Տարոնի բաժնի օպերիազոր Միքայել Սարգսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 11.11.2014թ. բաժնի ղեկավարության կողմից իրեն է հանձնարարվել Վանաձոր քաղաքի բնակչությի Անի Բոշյանի բնակարանում խուզարկության կատարումը: Նոյն օրը բաժնի այլ աշխատակիցների հետ գնացել է Ա.Բոշյանի բնակարան, սակայն վերջինս տանը չի եղել: Խուզարկությունը կատարվել է ընթերականների և Ա.Բոշյանի մոր ներկայությամբ, որի ընթացքում առգրավվել են գործի համար կարևոր նշանակություն ունեցող որոշ առարկաներ:

Նոյն օրը՝ երեկոյան, բաժնի պետի տեղակալ Թորոյանի հանձնարարականուվ օպերիազոր Կարեն Մուրադյանի հետ կրկին այցելել է Ա. Բոշյանի բնակության վայր վերջինիս հայտնաբերելու նպատակով: Ա.Բոշյանը գտնվել է տանը, և նրան հանցագործություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկել ոստիկանության Տարոնի բաժին:

Բերման ենթարկելուց հետո կազմել է համապատասխան փաստաթյուր, Անի Բոշյանին պարզաբանվել են իր՝ բերման ենթարկվածի իրավունքներն ու պարտականությունները, այնուհետև նրան որպես բերման ենթարկվածի սահմանված կարգով նկարահանել է, որի ընթացքում վերջինս հայտնել է իր տվյալները և քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնց կասկածանքով բերման է ենթարկվել, որից հետո նրան ուղեկցել է Թորոյանի աշխատասենյակ, որտեղ իգական սեփի աշխատակցությին կատարել է Ա. Բոշյանի անձնական խուզարկությունը: Նշված գործողություններն ավարտելուց հետո Ա.Բոշյանը ներկայացվել է քննչական բաժին՝ համապատասխան գործողություններ կատարելու:

Ա.Բոշյանն իրեն պահել է շատ հանգիստ, նրա նկատմամբ որևէ ճնշում չի գործադրվել, և ոչ ոք նրան չի վիրավորել:

Նոյնաբովանդակ ցուցմունք է տվել օպերիազոր Կարեն Մուրադյանը:

Ոստիկանության Տարոնի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Արմեն Դերջանը ցուցմունք է տվել այն մասին, որ հանցագործության կասկածանքով բերման Ենթարկված Անի Բոշյանի հետ որևէ առնչություն չի ունեցել, միայն տեղյակ է եղել, որ վերջինս կասկածվում է հանցագործության կատարման մեջ, և որ վերջինիս բնակարանում խուզարկություն է կատարվել: Օպերատիվ աշխատանքները դեկավարել են բաժնի պետի տեղակալ Վ.Շորոսյանը: Ա. Բոշյանին բերման Ենթարկելու օրը վերջինիս մայոք՝ իր դասընկերուի Քավական Խաչատրյանը, մտել է իր աշխատասենյակ և հայտնել է այդ մասին: Քանի որ քրեական գործը քննվել է քննչական վարչության վարույթում, ինքը Բ. Խաչատրյանին հայտնել է, որ գործով գրաղվում են քննիչները:

Նոյն օրը՝ ցերեկային ժամի, բաժնում նկատել է Ա.Բոշյանի հորը՝ Հակոբ Բոշյանին, սակայն տեղյակ չի եղել, թե վերջինս ինչ նպատակով է գտնվում բաժնում, նրա հետ չի խոսել և որևէ առնչություն չի ունեցել:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության պետի տեղակալ Արման Գալստյանը ցուցմունք է տվել այն մասին, որ քննչական վարչության վարույթում քննվող քրեական գործերից մեկի շրջանակներում 11.11.2014թ. ոստիկանության Տարոնի բաժնից ներկայացվել են հանցագործությունը կատարելու կասկածանքով բերման Ենթարկված Անի Բոշյանն և նրա վերաբերյալ նյութերը: Այդ պահին գործը քննող քննիչ Հովսեփ Հովսեփյանը բացակայել է աշխատավայրից, և մինչև նրա ժամանելը Անի Բոշյանը մնացել է իր աշխատասենյակում: Ինքը Ա.Բոշյանից հետաքրքրվել է, թե ինչպես են պոռնկագրական բնույթի լուսանկարները հայտնվել նրա համակարգչում, վերջինս էլ ներկայացրել է հանգամանքերը:

Որոշ ժամանակ անց ժամանել է քննիչը և Ա.Բոշյանին ուղեկցել է իր աշխատասենյակ: Տուն գնալուց առաջ բացել է քննիչի աշխատասենյակի դուռը և տեսնելով, որ հարցաքննությունը դեռևս շարունակվում է՝ բարի գիշեր մաղթել և հեռացել է:

Ա.Բոշյանն իր աշխատասենյակում միայնակ է եղել, ոչ ոք ներկա չի գտնվել իրենց խոսակցությանը: Ինքը որևէ մեկի աշխատասենյակում Ա.Բոշյանին չի հանդիպել, չի համոզել, նրան չի վիրավորել և որևէ ճշշում չի գործադրել: Իր աշխատասենյակում Ա. Բոշյանը գտնվել է հանգիստ վիճակում, միայն ասել է, որ նման արարք կատարելով՝ իր ծանոթների և ընտանիքի անդամների մոտ կիսայտառակվի, իսկ ինքը նրան հանգստացրել է՝ ասելով, որ նախաքննության տվյալները գաղտնի են և չեն հրապարակվում: Ա. Բոշյանի ցուցմունքի հետ կապված՝ քննիչին ոչինչ չի ասել, հարցաքննության ընթացքում քննիչի աշխատասենյակ չի մտել և վերջինիս հետ չի գրուցել, միայն հաջորդ օրն է քննիչից տեղեկացել, որ Ա. Բոշյանը գրել է մանրակրկիտ խոստովանական ցուցմունք:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության ՀԿԳ ավագ քննիչ Հովսեփ Հովսեփյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 11.11.2014թ. երբ գտնվել է աշխատավայրից դուրս, իրեն է զանգահարել վարչության պետի տեղակալ Արման Գալստյանը և ասել, որ իր վարույթում քննվող քրեական գործերից մեկի շրջանակներում հանցագործությունը կատարելու կասկածանքով անձ է բերման Ենթարկվել:

Վերադառնալով աշխատավայր՝ Ա.Գալստյանի աշխատասենյակում հանդիպել է նրան և բերման Ենթարկված Անի Բոշյանին, ապա վերջինիս հետ գնացել է իր աշխատասենյակ, որտեղ Ա.Բոշյանին պարզաբանել է: Թե ինչում է կասկածվում, ապա նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել ստորագրություն չեղանակու մասին, պարզաբանել կասկածյալի իրավունքներն ու պարտականությունները, և սկսվել է հարցաքննությունը: Ա.Բոշյանը մանրակրկիտ ցուցմունք է տվել կատարած հանցագործությունների մասին, ինքը վերջինիս ոչինչ չի թելադրել և չի ուղղորդել, նա իր ձեռքով շարադրել է ցուցմունքը, նշել է այնպիսի հանգամանքներ, որոնք մինչ այդ իրեն հայտնի չեն եղել, հետևաբար ինքը չեր կարող նման տեղեկություններ թելադրել: Հարցաքննության ընթացքում Անի Բոշյանը նաև իր հեռախոսով զանգել է ծնողներին, խոսել է նրանց հետ, հայտնել է, որ ամեն ինչ կարգին է, որ ծնողները շանհանգմտանան:

Ա.Գալստյանը հարցաքննության ընթացքում իր աշխատասենյակ չի մտել, իրեն ոչինչ չի ասել. միայն մեկ անգամ իր աշխատասենյակի դուռը կիսաբաց անելով՝ տեսել է, որ հարցաքննությունը շարունակվում է, բարի գիշեր մաղթելով՝ հեռացել է:

18.11.2014թ. Ա.Բոյջանին կրկին հրավիրել է իր աշխատավայր, որտեղ վերջինիս մեղադրանք է առաջադրել: Ա.Բոյջանն առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել, տվել է խոստովանական ցուցմունք և պնդել որպես կասկածյալ հարցաքննության ընթացքում իր տված ցուցմունքը: Ա.Բոյջանն իր աշխատասենյակում ճնշված չի եղել, իր ներկայությամբ ոչ ոք վերջինիս չի ճնշել և չի համոզել:

Իր աշխատասենյակում Ա. Բոյջանը գտնվել է հանգիստ վիճակում, միայն ասել է, որ նման արարք կատարելով՝ իր ծանոթների և ընտանիքի անդամների մոտ կիսայտառակվի. իսկ ինքը նրան հանգստացրել է՝ ասելով, որ նախաքննության տվյալները գաղտնի են և չեն հրապարակվում:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության պետ Թաթով Շուշանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ բերման ենթարկված Անի Բոյջանն իր աշխատասենյակում չի եղել, ինքը վերջինիս ընդահանրապես չի հանդիպել և նրա հետ որևէ առնչություն չի ունեցել:

Իր ներկայությամբ ոչ ոք Ա. Բոյջանի նկատմամբ ճնշում չի գործադրել, նրան ոչինչ չի համոզել: Հետագայում տեղեկացել է, որ կասկածանքով բերման ենթարկված Անի Բոյջանը տվել է խոստովանական ցուցմունքներ:

Լրացուցիչ հարցաքննության ընթացքում Անի Բոյջանը հայտնել է, որ Թորոսյանն իրեն ուղեկցել է ոչ թե Շուշանյանի, այլ Շարմազանովի աշխատասենյակ. ինքը շփոթել է նրանց պաշտոնը և ազգանունը և նման ցուցմունք է տվել: Երբ իր վերաբերյալ ըննվոր քրեական գործի նյութերին ծանոթանալու նպատակով 2015թ. հունվարի վերջերին ներկայացել է քննչական վարչություն, այնտեղ հանդիպել է Շուշանյանին և հասկացել, որ ինքը նախկինում ազգանունները շփոթել է:

ՀՀ ոստիկանության Տարոնի բաժնի պետ Երիկ Շարմազանովը ցուցմունք է տվել այն մասին, որ բերման ենթարկված Անի Բոյջանին իր տեղակալ Թորոսյանը իր աշխատասենյակ չի ուղեկցել: Ինքը, Թորոսյանը և Գալստյանը իր աշխատասենյակում Անի Բոյջանի հետ չեն գրուցել. նրա նկատմամբ որևէ ճնշում չի գործադրվել:

Իր հիշելով՝ իր հանձնարարությամբ օպերիխազորներից մեկը Ա. Բոյջանին տարել է աշխատասենյակ, ինքը գրուցել է վերջինիս հետ, որից հետո նրան ներկայացրել են քննչական բաժին: Ա.Բոյջանի հետևից ծեղով որևէ ժեստ չի կատարել, Ա.Գալստյանի հետ քավոր սահիկական հարաբերությունների մեջ չի գտնվում:

Ոչ ոք Ա.Բոյջանին չի ճնշել և չի համոզել, որ խոստովանի հանցագործություն կատարելու հանգամանքը: Անի Բոյջանն իր ներկայությամբ չի հոգվել և ծնողին հանդիպելու ցանկություն չի հայտնել: Նոյնիսկ երբ բերման ենթարկելուց հետո նրան նկարահանել են, նա եղել է հանգիստ, նոյնիսկ՝ ժամանակակից:

Ցուցմունքին կից Է.Շարմազանովը ներկայացրել է Ա. Բոյջանին բերման ենթարկելուց հետո կատարված տեսագրության լազերային կրիչը:

Նախաքննության ընթացքում որպես վկա հարցաքննված Հեղինե Ավետիսյանը և Հեղինե Խառասյանը ցուցմունքներ են տվել այն մասին, որ 11.11.2014թ. ոստիկանության աշխատակիցների կողմից հրավիրվել են ոստիկանության Տարոնի բաժնի և որպես ընթերականներ մասնակից են եղել մի աղջկա անձնական խուզարկության կատարմանը:

Խուզարկության ժամանակ այդ աղջիկը հանել է հազուատները, սակայն նրա մարմնի վրա որևէ արգելված իր չի հայտնաբերվել: Խուզարկության ժամանակ այդ աղջիկը լաց չի եղել, չի հոգվել: Խուզարկության ավարտից հետո իրենք ստորագրել են արձանագրությունը և դուրս են եկել:

Նախաքննության ընթացքում որպես վկա հարցաքննված Լորիս Ղազարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ փողոցում ունի փոքրիկ տաղավար, որտեղ գրավում է բջջային հեռախոսների և համակարգիչների վերանորոգմամբ: 2014թ. նոյեմբեր ամսին, կոնկրետ օրը չի հիշել, տաղավար է մտել մի տղամարդ, ներկայացել որպես ոստիկանության բաժնի պետի տեղակալ և հետաքրքրվել մի համակարգչից, որը մոտ երկու ամիս առաջ տվել են իրեն, և ինքը հետ չի վերադարձել: Ինքը պատասխանել է, որ նման դեպք չի եղել.

որից հետո այդ մարդու խնդրանքով դուրս է եկել տաղավարից և այնտեղ մեկ այլ տղամարդու դեմ դիմաց ասել, որ իրեն համակարգիչ չեն տվել: Այդ տղամարդը ևս հաստատել է իր ասածը, ասել է, որ ինքը շփորչվել է, և նրանը հեռացել են:

Որպես վկա հարցաքննիկած Արտակ Տիգրանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ փողոցում՝ Հայկի հրապարակում, զբաղվում է համակարգիչների վերանորոգմամբ և վաճառքով:

2014թ. նոյեմբեր ամսին, կոնկրետ օրը չի հիշել, երբ գտնվել է Սպիտակ քաղաքում, իրեն է զանգահարել անծանոթ մի տղամարդ և ներկայանալով որպես ոստիկանության աշխատակից՝ հետաքրքրվել է մի համակարգչից, որը, իբրև, մոտ 2 ամիս առաջ տվել են իրեն՝ վերանորոգելու: Ինքը ասել է, որ նման դեպք չի եղել, իրեն ոչ ոք համակարգիչ չի տվել: Ոստիկանը խնդրել է, որ ինքը վերադառնա Վանաձոր և այդ հարցը պարզաբանեն: Մոտ 30 րոպե անց վերադարձել է Վանաձոր, և ներկայացել ոստիկանության Տարոնի բաժին: Բաժնում հանդիպել է իրեն զանգողին, ում ազգանունը Թորոսյան է եղել, և մի տղամարդու, նրանց դեմ դիմաց ասել է, որ ոչ ոք իրեն համակարգիչ չի տվել, որից հետո այդ տղամարդը, դիմելով Թորոսյանին, ներողություն է խնդրել և ասել է, որ նրան խարել է, որից հետո ինքը հեռացել է բաժնից:

Ցուցմունքներում առկա էական հակասությունները պարզելու նպատակով առերես հարցաքննություններ են կատարվել Անի Բոշյանի, Վազգեն Թորոսյանի, Անի Գաբրիելյանի, Արման Գալստյանի, Հովսեփ Հովսեփյանի, Էրիկ Շարմազանովի, ինչպես նաև Հակոբ Բոշյանի, Վազգեն Թորոսյանի և Արմեն Դերջյանի միջև, որոնց ընթացքում վերջիններս պնդել են նախաքննության ընթացքում իրենց տված ցուցմունքները:

Տուժող Անի Բոշյանի և վկա Հ.Հովսեփյանի միջև կատարված առերես հարցաքննության ընթացքում վերջիններս պնդել են նախաքննության ընթացքում իրենց տված ցուցմունքները, տուժողի ներկայացուցիչ Արթուրի Սաքոնցի կողմից առաջադրված հարցերին վկա Հ.Հովսեփյանը չի պատասխանել՝ պատճառարանելով, որ այդ հարցերի պատասխանները առկա են Անի Բոշյանի վերաբերյալ իր կողմից քննված քրեական գործի նյութերում, իսկ մասնակից Արթուր Սաքոնցը հայտարարություն է ներկայացրել վկայի կողմից սահմանված պարտականությունները չկատարելու համար միջոցներ ձեռնակելու վերաբերյալ:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ առերես հարցաքննության ընթացքում վկա Հ.Հովսեփյանը հայտնել է, որ Ա.Բոշյանը ցուցմունքներում նշել է այնպիսի մանրամասություններ նրա հետ շփված անձանց մասին, որոնք մինչ այդ գործով իրեն հայտնի չեն եղել, հետևաբար ինքը չէր կարող դրանք թելադրել: Մասնավորապես՝ նշել է նրա և Արամ Ամիրխանյանի հարաբերությունների մասին, թե որքան ժամանակ են շփվել, երբ են գտնվել, ինչ պատճառներով, ինչ ճանապարհով է նա տեղեկացել, որ Արամը շփվում է Մաղենայի հետ, թե Արամը ինչ բառեր էր օգտագործում Մաղենայի հետ շփվելիս, մասնավորապես՝ այն նույն բառերը, որոնք մինչ այդ Արամն ասել է իրեն:

Պատմել է նաև Արտյոմ Աբրահամյանի հետ շփվելու, նրա հետ գտնվելու, նրա կողմից Նարինե Նավասարդյանի նկարները հավանելու և նրանցից վերժիշնդիր լինելու մասին: Ա.Բոշյանին բերման Ենթարկելու կասկածանքի բնույթը պոռնկագրական նյութեր տարածելն է եղել, այնինչ ցուցմունքում նշվել են հետո Անի Բոշյանի արտահայտած բառերը՝ «ցենզուրայից դուրս նկարներ», եթե ինքը ցուցմունքը թելադրած լիներ, ապա կնշվեր օրենքի տառով՝ «պոռնկագրական նյութեր» բառերը:

Լրացուցիչ հարցաքննության ընթացքում Հ.Հովսեփյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը Ա.Սաքոնցի հարցերին չպատասխանելու որևէ դիտավորություն չի ունեցել: Հարցերը վերաբերել են կոնկրետ քննչական գործողության տևողությանը կամ կատարման եղանակին, այդ պատճառով չի պատասխանել հարցերին, քանի որ դրանք ներառված են եղել քրեական գործի նյութերում և շատ հնարավոր եր, որ ինքը չի հիշել կոնկրետ հարցաքննության տևողությունը և այլ պատասխան տար, որը հետագայում կօգտագործվել իր դեմ:

Հ.Բոշյանի և Վ.Թորոսյանի միջև կատարված առերես հարցաքննության ընթացքում Հ.Բոշյանը հաստատել է այն հանգամանքը, որ իրականում ինքը Թորոսյանին հայտնել է, որ

համակարգիչը տվել են վերանորոգման, սակայն նշել է որ դա վաղուց է եղել, համակարգիչը չի վերանորոգվել, և այն դեն են նետել: Քանի որ Թորոսյանը չի հավատացել իր հայտնածի խսկությանը, ինքն առաջարկել է զնալ և ցույց տալ, թե որտեղ է այն տվել վերանորոգման: Սակայն Վ.Թորոսյանի առաջարկած այն հարցին, որ եթե համակարգիչը դեն է նետել, ապա ինչ են նրանք միասին փնտրել խանութերում, Հ. Բոշյանը պատասխանել է, որ փնտրել են կոտրված համակարգիչը:

Հատկանշական է այն, որ Հ.Բոշյանը հայտնել է, որ ինքը ոստիկանության աշխատակիցներին բաժնից դուրս գալու ցանկություն չի հայտնել, քանի որ իրեն ասել էին, որ մինչև աղջկը չներկայանա, իրեն բաց չեն թողնի, սակայն վերջինս չի հստակեցրել, թե նման պայմաններում ինչպես է ստացվել, որ առանց Անի Բոշյանի ներկայանալու ինքը հեռացել է ոստիկանությունից:

Նախաքննության ընթացքում ձեռք են բերվել Անի և Հակոբ Բոշյանների բջջային հեռախոսահամարներից 11.11.2014թ. կատարված մուտքային և ելքային հեռախոսագանգերի վերծանումները և զանգերը սպասարկած կայանների տեղակայման հասցեները, որոնց զննությամբ պարզվել է, որ երկու հեռախոսահամարների զանգերը նշված օրը սպասարկվել են Վանաձոր քաղաքում տեղակայված կայանների կողմից: Զննությամբ պարզվել է որ Հակոբ Բոշյանի բջջային հեռախոսահամարից 11.11.2014թ. ժամը 10.47-ին և 13.20-ին ելքային հեռախոսագանգերը են կատարվել Լյովա Մելիքյանի 094-08-20-05 հեռախոսահամարին, իսկ Ա.Բոշյանի հեռախոսահամարից՝ Բավկան Խաչատրյանի 098-58-15-42 համարին:

Այս կապակցությամբ տուժող Անի Բոշյանը հայտնել է, որ ինքը շահագործել է երկու տարբեր հեռախոսահամարներ և իր հիշելով 11.11.2014թ. երբ ինքը գտնվել է Երևանում երկու հեռախոսահամարներն էլ իր մոտ են եղել, սակայն, եթե զանգերը սպասարկվել են Վանաձոր քաղաքում տեղակայնված կայանների կողմից, հնարավոր է, որ մի հեռախոսը մնացել է տանը և շահագործվել տան անդամների կողմից:

Հատկանշական է այն հանգամանքը, որ Անի Բոշյանը չի կարողացել պատասխանել այն հարցին, որ եթե հեռախոսահամարը մնացել տանը, ապա իր հեռախոսահամարից 11.11.2014թ. ժամը 14.51-ից մինչև 15.27-ը ընկած ժամանակահատվածում ուսւ կողմից են կատարվել հեռախոսագանգերը իր ծնողի՝ Բավկան Խաչատրյանի համարին, այն պարզաբանում, երբ նշված օրը և նշված ժամին իրենց բնակարանում խուզարկություն է կատարվել, իսկ Բ. Խաչատրյանը մասնակից է եղել խուզարկության կատարմանը:

Վանաձորի քաղաքապետարանի կոմունալ բաժնի պետ Լյովա Մելիքյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Հակոբ Բոշյանը աշխատում է վարչությունում որպես աղքատար մեքենայի վարորդ: 2014թ. աշնանը, կոնկրետ օրը չի հիշել, Հ.Բոշյանը զանգահարել է իրեն և հայտնել, որ գնում է ոստիկանություն և այդ պահին չի կարող աշխատանքի դուրս գալ, ինչդեռ է իրեն փոխարինել այլ աշխատակցով: Սովորաբար աղքը տեղափոխվում է առավոտյանը ժամը 06.00-ի սահմաններում, իսկ երկրորդ անգամ 11.00-ից 12.00-ի սահմաններում: Իր կարծիքով ժամը 10.47-ի զանգի դեպքում Հ. Բոշյանն իրեն հայտնել է, որ գնում է ոստիկանություն, իսկ ժամը 13.20-ի զանգի դեպքում հայտնել է, որ արդեն դուրս է եկել ոստիկանությունից: Հ.Բոշյաննը ինչպես հեռախոսագրույցների ժամանակ, այնպես էլ դրանից հետո, իրեն ոչինչ չի ասել, որ ոստիկանությունում իրեն պահել են և չեն թույլատրել դուրս գալ, միայն ասել է, որ դա կապված է աղջկա հետ, և ինքը այլևս չի հետաքրքրվել:

Երիկ Շարմազանովի կողմից ներկայացված լազերային կրիչի զննությամբ պարզվել է, որ Անի Բոշյանը տեսախցիկի առջև հանգիստ վիճակում, ժայտը դեմքին, առանց հուզակեցու պատասխանել է նկարահանողի հարցերին, հայտնել իր կենսագրական տվյալները և ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որի կասկածանքով բերման է ենթարկվել:

Ա.Բոշյանի և Ա.Գալստյանի միջև կատարված առերես հարցաքննության ժամանակ տուժողի ներկայացուցիչ Արթուր Սաքունցը հայտարարել է, որ բերման ենթարկելու ժամերի հետ կապված ՀՀ-ի վերաբերյալ միջազգային և ազգային բազմաթիվ գեկույցներում, այդ թվում մարդու իրավունքների պաշտպանի տարեկան գեկույցներում, արձանագրվել է, որ

ոստիկանության բաժիններում մարդկանց բերման են ենթարկում և պահում օրենքով սահմանված նորմերի խախտումներով և փաստաթղթային արձանագրումը չի համապատասխանում իրական փաստերին և հանգամանքներին, բացի այդ, նախաքննական մարմինը 11.11.2014թ. Անի Բոշյանին չի ներկայացրել այնպիսի օբյեկտիվ ապացույցներ, որը կհամոզեր Անի Բոշյանին տալ ինքնախոստավանական ցուցմունքներ, ուստի նման պարագայում ակնհայտ է որ Ա.Բոշյանը ցուցմունք է տվել ճնշումների ազդեցության տակ:

Այնինչ Լոռու մարզի քննչական վարչությունում քննված թիվ 53100214 քրեական գործի գննությամբ պարզվել է, որ դեռևս 30.10.2014թ. քննչական վարչություն է ստացվել փորձագետի եզրակացությունը, համաձայն որի՝ Ա.Բոշյանի համակարգչում հայտնաբերվել են Նարինե Նավասարդյանի պոռնկագրական բնույթի լուսանկարները, ինչպես նաև պոռնկագրական բնույթի այն լուսանկարի բնօրինակը, որի վրա համապատասխան ծրագրով ավելացվել է Ն.Նավասարդյանի դիմանկարը: Բացի այդ, մինչև Ա.Բոշյանին բերման ենթարկելը նախաքննական մարմնին հայտնի է եղել այն հանգամանքը, որ այն «IP»/այփի/ հասցեները, որոնցով հասանելիություն է ստացվել Մաղենա Սահակյանի անվամբ բացված անձնական էջին, ակտիվացվել են Ա.Բոշյանի անվամբ գրանցված 077-45-53-88 հեռախոսահամարից:

Ինչ վերաբերում է Ա.Բոշյանին բերման ենթարկելու կարգի և ժամերի արձանագրման խախտմանը, ապա նախաքննության ընթացքում այդպիսի տեղեկություններ ձեռք չեն բերվել, ավելին՝ պարզվել է, որ բերման ենթարկելուց 2 ժամ 55 րոպե հետո սկսվել է Ա.Բոշյանի որպես կասկածյալ հարցաքննությունը, որը տևել է 3 ժամ 25 րոպե:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, կասկածյալի հարցաքննությունը կատարվում է նրան ծերբակալելուց կամ խափանման միջոց կիրառելու մասին որոշումը նրան հայտարարելուց անմիջապես հետո, ուստի նման պայմաններում քննիչը Ա. Բոշյանին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 48-րդ կետով նախատեսված գիշերային ժամերին հարցաքննելով նույնիսկ դատավարական խախտումներ թույլ չի տվել:

Այսպիսով, սույն քրեական գործի նախաքննությամբ փաստական տվյալներ ձեռք չեն բերվել ՀՀ ոստիկանության Տարոնի բաժնի և ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության աշխատակիցների կողմից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցավոր արարք կատարելու վերաբերյալ, հետևաբար քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 2015 թվականի ապրիլի 17-ի որոշման դեմ բերած բողոքը մերժել՝ անհիմ լինելու պատճառաբանությամբ:

Ենթելով վերոգրյալից և դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով և 263-րդ հոդվածի 2-րդ մասով,

## ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ն.Բարսեղյանի կողմից թիվ 62229814 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 2015 թվականի ապրիլի 17-ին կայացված որոշման դեմ բերած բողոքը մերժել՝ անհիմ լինելու պատճառաբանությամբ:

2. Որոշման պատճենն ուղարկել տուժող Անի Բոշյանին, տուժողի ներկայացուցիչներ՝ Արթուր Սաքոնցին և Արայիկ Զայսանին, ինչպես նաև Հակոբ Բոշյանին՝ պարզաբանելով, որ որոշումը ստանալուց հետո մեկամյա ժամկետում այն կարող են բողոքարկվել դատարան:

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես  
կարևոր գործերով քննության վարչության  
ավագ դատախազ՝

Գ.Վ. Գևորգյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Վ.Վաղարշյան 13Ա, հեռ./011-900-047

«17 » 04 2015թ. 18-77/ց - 15

1. Անի Բոշյանին  
ք. Վանաձոր Աբովյան փող. 28տուն

✓ 2. Յելսինկյան  
քաղաքացիական ասամբլեայի  
Վանաձորի գրասենյակի  
նախագահ  
Արթուր Մաքունցին  
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պող., 59

Ուղարկում եմ Ձեր հաղորդման հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված թիվ 62229814 քրեական գործով՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման օրինակը:

Միաժամանակ պարզաբանում եմ, որ որոշումը կարող եք բողոքարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Առջիր որոշումը 15 թերթից:

Հատուկ քննչական ծառայության  
հատկապես կարևոր գործերի քննիչ  
Ն.Գ. Բարսեղյան

## ՈՐՈՇՈՒՄ

**քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու  
մասին**

17.04.2015թ.

ք. Երևան

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ն.Գ. Բարսեղյանս, վերանայելով  
վարույթում քննվող թիվ 62229814 քրեական գործի նյութերը,

### Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2014թ. թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ հատուկ քննչական ծառայություն է ստացվել Ղելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վաճառորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի գրությունն այն մասին, որ կազմակերպություն է դիմել Վաճառոր քաղաքի բնակչութի Ամի Հակոբի Բոշյանը հայտնելով, որ 2014թ. նոյեմբերի 11-ին ոստիկանության աշխատակիցների ուղեկցությամբ գնացել է ոստիկանության Տարոնի բաժին, որտեղ պաշտոնատար անձինք իր նկատմամբ կիրառել են հոգեբանական ճնշումներ, նսեմացրել են արժանապատվությունը, ծաղրել և անձնական բնույթի վիրավորանքներ հասցրել, ինչի արդյունքում ինքը գրել է իրականությանը չիամապատասխանող ցուցմունք: Այնուհետև, դրանից դողված, 2014թ. նոյեմբերի 23-ին կատարել է ինքնասպանության փորձ:

Ամի Բոշյանն իր հերթին հանցագործության մասին նույնաբովանդակ հաղորդում և բացատրություն է տվել:

Դեպքի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 04.12.2014թ. հարուցվել է թիվ 62229814 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով:

Ամի Բոշյանը ճանաչվել է տուժող և ցուցմունք է տվել այն մասին, որ 2014թ. նոյեմբերի 11-ին, երբ անձնական գործերով գտնվել է Երևան քաղաքում, իրեն է զանգահարել մայրը Բավական Խաչատրյանը, և հայտնել, որ ոստիկանության Տարոնի բաժնի աշխատակիցներն այցելել են իրենց բնակարան, խուզարկել են բնակարանը, իսկ մի քանի այլ աշխատակիցներ իր հորը՝ Հակոբ Բոշյանին, տարել և մի քանի ժամ պահել են ոստիկանությունում, ապա պահանջել է, որ ինքն անմիջապես վերադառնա Վաճառոր:

Նույն օրը՝ ժամը 17.00-ի սահմաններում, արդեն գտնվել է տանը, երբ իրենց բնակարան են այցելել ոստիկանության երկու աշխատակից և իրեն տարել են ոստիկանության Տարոնի բաժին: Մայրը նույնպես նստել է ոստիկանների ավտոմեքենան, իսկ հայրը իրենց մեքենայով է գնացել:

Բաժնում ոստիկանները կազմել են ինչ-որ փաստաթղթեր, որոնք ինքը ստորագրել է, և իրեն տարել են բաժնի պետի տեղակալ Թորոսյանի աշխատասենյակ, որտեղ վերջինս իր հասցեին անպարկեց արտահայտություններ է արել և մեղադրել պոռնկագրական նյութեր տարածելու մեջ: Ինքն ասել է, որ նման արարք չի կատարել, սակայն իրեն ոչ ոք չի լսել, և շարունակվել են վիրավորանքներն իր և իր ընտանիքի հասցեին:

Այդ ժամանակ Թորոսյանը հանձնարարել է աշխատակիցներին, որ նկարահանեն իրեն, որից հետո իրեն բերման ենթարկած ոստիկանության աշխատակիցը թջային հեռախոսով նկարահանել է իրեն տարբեր դիրքերից, իսկ ինքը հայտնել է իր տվյալները և քրեական օրենսգրքի այն հոդվածը, որի կասկածանքով իրեն բերման են ենթարկել:

Նկարահանումից հետո կրկին գնացել են Թորոսյանի աշխատասենյակ, այնտեղ են եկել նաև երեք աղջիկներ, որոնք իր կարծիքով եղել են ոստիկանության աշխատակիցներ:

Թորոսյանը հանձնարարել է, որ իրեն խուզարկեմ, որից հետո այդ աղջիկները Թորոսյանի աշխատասենյակի վերջնամասում գտնվող հանգստի սենյակում խուզարկել են իրեն:

Նրանցից մեկը պահանջել է, որ ինքն ամբողջությամբ հանի հագուստը՝ ասելով, որ իր մարմնի վրա դաջվածքներ և սպիներ է փնտրում: Դագուստը հանելուց հետո պահանջել է, որ կքանստի, որպեսզի պարզեն՝ ներքին օրգաններում արդյոք ինչ-որ իրեր թաքցնում է, թե ոչ:

Խուզարկության ավարտից հետո Թորոսյանը վերադարձել է և միասին գնացել են բաժնի պետ Շուշանյանի աշխատասենյակ, որտեղ կրկին շարունակվել են նսեմացումներն ու վիրավորանքները: Քիչ անց այնտեղ է եկել նաև քննչական բաժնի պետ Գալստյանը, ով, միանալով Թորոսյանին և Շուշանյանին, սպառնացել է, որ իրեն կձերբակալեն և 72 ժամ պահելուց հետո կուղարկեն կանաց գաղութ: Իր ինքնազգացողությունը վատացել է, և դեղորայք վերցնելու համար ցանկացել է տեսնել ծնողին, սակայն իրեն չեն թույլատրել ասելով, որ եթե այդ պահին առանց ծնողի չի դիմանում, ինչպես պետք է դիմանա գաղութում:

Տեսնելով, որ սպառնալիքների և ճնշումների ազդեցությամբ չեն կարողանում համոզել իրեն խոստավանել իր կողմից չկատարված հանցագործությունը, Գալստյանը խնդրել է, որ Թորոսյանն ու Շուշանյանը դուրս գան սենյակից, որից հետո սկսել է իրեն համոզել, որ գրի խոստովանական ցուցմունք՝ ասելով, որ այդ մասին ոչ ոք չի իմանա, գործում իր անվան փոխարեն այլ տվյալներ կլրացվեն, հետագայում ինքը դատարանում կվճարի տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով, և ամեն ինչ կավարտվի:

Տեսնելով, որ այդտեղից դուրս գալու որևէ այլ հնարավորություն չունի՝ համաձայնվել է ցուցմունք տալ և շուտ հեռանալ: Այդ ժամանակ Գալստյանի հետ գնացել է վերջինիս աշխատասենյակ, և միջանցքում հանդիպել են Շուշանյանին, ում Գալստյանը ներկայացրել է որպես իր քավորի: Միջանցքով քայլելու ժամանակ դիմացի պատին առկա ապակու արտացոլանքի մեջ տեսել է, որ Շուշանյանը իր հետևից ծեռքի շարժումով ինչ-որ ժեստ է արել, որը նմանվել է սեռական բնույթի հայիոյանքի: Դա նկատել է նաև Գալստյանը:

Գալստյանի աշխատասենյակ է եկել քննիչ Յովսեփի Յովսեփյանը, ներկայացել է որպես գործը քննող քննիչ, Գալստյանը նրան ասել է, որ ինքը կգրի խոստավանական ցուցմունք, և միասին գնացել են քննիչի աշխատասենյակ:

Քննիչը իրեն է տվել ինչ-որ փաստաթղթեր, որոնք ինքը առանց կարդալու ստորագրել է, և սկսվել է իր հարցաքննությունը: Քննիչն իրեն թելադրել է ցուցմունքը, և ինքը գրել է, թե, իբր, պատրաստել և համացանցի միջոցով տարածել է Մառենա Սահակյանի և Նարինե Նավասարդյանի պոռնկագրական բնույթի նկարները: Յարցաքննության ընթացքում Գալստյանը պարբերաբար մտել է քննիչի աշխատասենյակ, ինչ-որ բան է խոսել քննիչի հետ և հեռացել: Իր հարցաքննությունը տևել է մի քանի ժամ, որի ընթացքում մի քանի անգամ քննիչի հեռախոսով զանգել է ծնողներին:

Գալստյանն ու Յովսեփյանն իրեն ասել են, որ ոչ ոքի, այդ թվում իր ընտանիքի անդամներին չասի, թե ինչ ցուցմունք է գրել:

Յարցաքննության ավարտից հետո՝ ժամը 03.00-ի սահմաններում, քննիչի հետ միասին դուրս է եկել բաժնին:

Շուրջ 7 օր անց իրեն զանգել է Յովսեփյանը և պահանջել է անհապաղ ներկայանալ քննչական բաժնին: Բաժնում քննիչն ու Գալստյանն իրեն հարցուփորձ են արել ոճն Լիամնա Մուրադյանի վերաբերյալ, թե ինչ կապ կա իրենց միջև, քանի որ վերջինիս

համակարգչից հայտնաբերվել են նույն անձանց վերաբերյալ պոռոնկագրական բնույթի լուսանկարներ: Ինքը հայտնել է, որ այդպիսի մարդու չի ճանաչում, որևէ կապ չունի նրա հետ, և հրաժարվել է գրել, որ այդ լուսանկարները միասին են կազմել և տարածել: Այնուհետև քննիչի աշխատասենյակում իրեն մեղադրանք է առաջադրվել, կրկին ստորագրել է փաստաթղթեր, որոնց բովանդակությանը չի ծանոթացել, և քննիչի թելադրանքով գրել է նախորդ ցուցմունքի բովանդակությամբ ցուցմունք: Քննիչը որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման օրինակ իրեն չի տվել՝ պատճառաբանելով, որ կամ այն կկորցինի, կամ ինչ-որ մենք կկարդա:

Չետագայում գիտակցելով, թե ինչ ծանր հանցանք կատարելու համար է մեղադրվում, և որ այդ արարքները ինքը չի կատարել, այդ ամենը գրել է ճնշումների և նվաստացումների արդյունքում, իր անունը և բարի համբավը կխայտառակվի ամբողջ քաղաքում՝ կատարվածի մասին պատմել է մայրիկին, որից հետո, տեսնելով ծնողի ծանր ապրումները, որոշել է վերջ տալ կյանքին և 2014թ. նոյեմբերի 23-ին դեղահարերի մեջ քանակություն ընդունելու միջոցով՝ ինքնասպանության փորձ է կատարել:

Ա.Բոշյանի մայրը՝ Բավական Խաչատրյանը, ցուցմունք է տվել այն մասին, որ 2014թ. նոյեմբերի 11-ին, երբ իր դուստրը՝ Անի Բոշյանը, գտնվել է Երևան քաղաքում, իրենց բնակարան են այցելել ոստիկանության Տարոնի բաժնի աշխատակիցները և խուզարկել են իրենց տունը, մինչև խուզարկությունը սկսելը Թորոսյանն իր ամուսնուն՝ Շակոր Բոշյանին, տարել է ոստիկանության բաժն, և ժամը 12.30-ից մինչև 16.00-ը նրան պահել են բաժնում:

Այդ ընթացքում ինքը բազմիցս զանգել է աղջկան, սակայն նրա հեռախոսը անջատված է եղել, իսկ երբ Անին պատասխանել է զանգերին, պահանջել է, որ շտապ վերադառն Վանաձոր:

Ժամը 17.30-ի սահմաններում Անին արդեն գտնվել է տանը: Որոշ ժամանակ անց իրենց բնակարան են այցելել խուզարկություն կատարող աշխատակիցներից երկուսը և ասել են, որ Անիին պետք է տանեն ոստիկանություն: Ինքը Անիի հետ նստել է ոստիկանների ավտոմեքենան, և գնացել են Տարոնի բաժն:

Բաժնում Անիին տարել են Թորոսյանի աշխատասենյակ, իսկ ինքը մնացել է միջանցքում, սակայն սենյակի ներսից լսել է Անիի լացի բարձր ձայնը, որոշ ժամանակ անց նրան դուրս են բերել սենյակից՝ որպեսզի նկարահանեն, իսկ Թորոսյանը, տեսնելով իրեն, բարկացել է իր վրա, որ միջանցքում չսպասի, որից հետո ինքը մտել է իր դասընկերոց՝ Արմեն Ղերջյանի աշխատասենյակ, ով նույնպես աշխատել է նույն բաժնում:

Որոշ ժամանակ մնացել է ոստիկանության մասնաշենքում, հետո իրեն դուրս են հրավիրել ոստիկանությունից: Մինչև ժամը 01.00-ը տեղեկություն չի ունեցել Անիից, այդ ժամանակ Անին իրեն է զանգել քննիչի հեռախոսից, ինքը բարձրացել է 3-րդ հարկ և տեսել է աղջկան:

Ժամը 03.00-ի սահմաններում Անին դուրս է եկել բաժնից, և գնացել են տուն: Անին գտնվել է ընկճված, վախտեցած վիճակում, ոչինչ չի խոսել, իրենց ոչինչ չի պատմել:

Մի քանի օր անց Անիին կրկին հրավիրել են քննչական բաժն: Այդ օրը ևս մի քանի ժամ մնացել է քննիչի աշխատասենյակում: Դրանից հետո մի քանի օր շարունակ Անին գտնվել է ծանր վիճակում, իր հետ չի խոսել, իսկ 2014թ. նոյեմբերի 23-ին դեղահարեր ընդունելու եղանակով ինքնասպանության փորձ է կատարել, որից հետո իրեն պատմել է, որ 2011թ. նոյեմբերի 11-ին ոստիկանության բաժնում նրա նկատմամբ կատարվել են ապօրինություններ, նսեմացրել են նրա արժանապատվությունը, սպառնացել են,

ճնշումներ են գործադրել, որպեսզի խոստովանի իր կողմից չկատարված համցագործությունը:

Դատկանշական է այն հանգամանքը, որ Ա. Բոշյանը նշել է, որ ոստիկանների ապօրինի գործողությունների մասին մայրիկին պատմել է մինչև 23.11.2014թ, իսկ Բ.Խաչատրյանը նշել է, որ այդ ապօրինությունների մասին Անի Բոշյանը իրեն պատմել է ինքնասպանության փորձ կատարելուց հետո միայն:

Դակոր Բոշյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2014թ. նոյեմբերի 11-ին ժամը 11.00-ի սահմաններում, իրենց բնակարան են այցելել ոստիկանության աշխատակիցներ և հետաքրքրվել են իր աղջկա գտնվելու վայրի վերաբերյալ, ինքն էլ հայտնել է, որ աղջիկը Երևանում է: Ոստիկանության մի քանի աշխատակիցներ սկսել են խուզարկել իրենց բնակարանը, իսկ նրանցից Թորոսյան ազգանունով աշխատակիցը իրեն տարել է ոստիկանության Տարոնի բաժին և մինչև ժամը 16.00-ն պահել այնտեղ: Այդ ընթացքում Թորոսյանը և մյուս աշխատակիցները հայիոյել են իրեն, հարցրել են, թե ուր է աղջիկը, և ասել են, որ մինչև աղջիկը չներկայանա, իրեն բաց չեն թողնի: Եթուախոսը վերցրել են իր ձեռքից և չեն թույլատրել, որ հեռախոսազնությունը կատարի, միայն շատ խնդրելուց հետո են թույլատրել զանգահարել է իր տնօրենին և հայտնել, որ չի կարող աշխատանքի դուրս գալ:

Մի քանի ժամ նատել է ինչ-որ սենյակում, որից հետո իրեն վերադարձրել են հեռախոսը և ասել են, որ զնա տուն, իսկ երբ աղջիկը վերադառնա, պարտավորեցնի նրան ներկայանալ ոստիկանություն: Ինքը քայլելով մոտ 25 րոպեում հասել տուն և տեսել, որ ոստիկանները դեռևս խուզարկում են իրենց տունը:

Երեկոյան Անին վերադարձել է տուն, իրենց բնակարան են գնացել ոստիկանության երկու աշխատակիցներ և Անիին տարել են ոստիկանություն: Այդ օրը՝ մինչև ժամը 03.00-ն, սպասել են ոստիկանությունում, որից հետո Անիի հետ վերադարձել են տուն: Մի քանի օր հետո տեղեկացել է, որ Անին ինքնասպանության փորձ է կատարել, քանի որ նոյեմբերի 11-ին ոստիկանության բաժնում նրան ճնշել և համոզել են, որ խոստովանական ցուցմունք գրի:

ՀՀ ոստիկանության Տարոնի բաժնի պետի տեղակալ Վազգեն Թորոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Լոռու մարզի քննչական վարչության վարույթում համակարգչի միջոցով պոռնկագրական նյութեր տարածելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործերից մեկի շրջանակներում հավաստի տեղեկություններ են ստացվել, որ համցագործությունը կատարել է Վանաձոր քաղաքի բնակչության Անի Բոշյանը: Ա.Բոշյանին հայտնաբերելու նպատակով 2014թ. նոյեմբերի 11-ին՝ մոտավորապես ժամը 12.00-ին, այցելել է վերջինիս բնակության վայր, սակայն Ա.Բոշյանը տանը չի եղել և իրեն դիմավորել են վերջինիս ծնողները, ապա հայտնել, որ Անին հավանաբար գտնվում է Երևանում: Ինքը հետաքրքրվել է, թե որտեղ է Անիի համակարգիչը, և վերջինիս հայրը՝ Դակոր Բոշյանը, հայտնել է, որ այն շուրջ երկու ամիս առաջ վճարվել է, և տվել են վերանորոգման: Ինքն առաջարկել է միասին գնալ և տեսնել, թե ում մոտ է համակարգիչը, ապա Յ.Բոշյանի մատնանշած երթուղիով միասին գնացել են Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող ինչ-որ մի տաղավար, որը մատնանշելով՝ Յ.Բոշյանը հայտնել է, որ նշված վայրում է համակարգիչը տվել վերանորոգման, սակայն երբ տվյալ կետի աշխատակիցը հերքել է Յ.Բոշյանի կողմից համակարգիչ հանձնելու հանգանքը, վերջինս հայտնել է, որ շփոթվել է և այլ խանություն է այն տվել վերանորոգման:

Կրկին Յ.Բոշյանի մատնանշած երթուղիով գնացել են մեկ այլ խանութ, որտեղի հիմնական աշխատակիցը բացակայել է խանութից: Մեկ այլ աշխատակիցից վերցնելով նրա հեռախոսահամարը զանգել ու գրուցել է նրա հետ, վերջինս հայտնել է, որ իրեն նման համակարգիչ չեն տվել, և որ ինքը գտնվում է Սպիտակ քաղաքում:

Խանութի աշխատակիցին խնդրել է այդ հարցը պարզելու նպատակով շտապ վերադառնալ Վանաձոր, իսկ Յ.Բոշյանին առաջարկել է դրում սպասելու փոխարեն գնալ ուստիկանության Տարոնի բաժին և այնտեղ սպասել, ինչին վերջինս համաձայնել է:

Քանի որ այդ պահին օպերլիազորների մոտ առկա է եղել Ա.Բոշյանի բնակարանը խուզարկելու նասին դատարանի որոշումը, ինքը հանձնարարել է օպերլիազորներին սկսել խուզարկությունը:

Բաժնում, իր հիշելով, սուրճ են խմել և որոշ ժամանակ անց բաժին է եկել խանութի աշխատակիցը: Յ.Բոշյանը, տեսնելով խանութի աշխատակիցին, ասել է, որ իրականում խաբել է, համակարգիչը իրականում վերանորոգման չի տվել, այլ այն առգրավել են ուստիկանության աշխատակիցները:

Եշտելով, որ իրականում համակարգիչը առգրավվել է մեկ այլ գործի շրջանակներում, Յ.Բոշյանին ասել է, որ գնա տուն, իսկ երբ Ա.Բոշյանը վերադառնա, վերջինիս անմիջապես ուղարկի ուստիկանության Տարոնի բաժին:

Յ.Բոշյանին ոչ ոք չի պարտադրել, որ մնա բաժնում, նա այնտեղ մնացել է իր իսկ ցանկությամբ և ամենաշատը մեկ ժամ մնալուց հետո ժամը 14.00-ի սահմաններում, դուրս է եկել բաժնից:

Նույն օրը երեկոյան, հանձնարարել է օպերլիազորին գնալ և պարզել, թե Ա.Բոշյանն արդյոք վերադարձել է, թե ոչ, և տեղեկանալով, որ վերադարձել է հանձնարարել է նրան բերման ենթարկել ուստիկանություն:

Ա.Բոշյանին բերման ենթարկելուց հետո պարզաբանվել են իրավունքները, կազմվել են արձանագրություններ, որից հետո ինքը ծեռնամուխ է եղել իգական սեռի երկու ընթերականների և նույն սեռի ուստիկանին ապահովելու գործընթացին, որպեսզի Ա.Բոշյանին ենթարկեն անձնական խուզարկության: Խուզարկությունից հետո Ա.Բոշյանին նկարահանել են ուստիկանության աշխատակիցները, որի ընթացքում նա հայտարարել է իր տվյալները և քրեական օրենսգրքի այն հոդվածը, որի կասկածանքով բերման է ենթարկվել: Ա.Բոշյանի հետ բոլոր անհրաժեշտ գործողություններն ավարտելուց հետո վերջինս համապատասխան գրությամբ ներկայացվել է քննչական բաժին:

Ինքը Ա.Բոշյանին բաժնի պետի աշխատանքների չի տարել, նրա նկատմամբ որևէ ճնշում, սպառնալիք և վիրավորանք չի եղել: Ա.Բոշյանը գտնվել է հանգիստ վիճակում:

Ոստիկանության Տարոնի բաժնի ՊՊԾ դասակի ուստիկան Անի Գաբրիելյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2014թ. նոյեմբերի 11-ին երեկոյան, Թորոսյանի կանչով ներկայացել է բաժին և իրականացրել է բերման ենթարկված Անի Բոշյանի անձնական խուզարկությունը, որին մասնակցել են ևս երկու ընթերականներ: Անձնական խուզարկության ընթացքում Ա.Բոշյանն իրեն շատ հանգիստ է պահել, կատարել է իր օրինական պահանջները:

Խուզարկության ընթացքում Ա.Բոշյանը մերկացել է, ինքը ստուգել է, որ վերջինիս մոտ և մարմնի վրա որևէ արգելված իրեր չկան, և ավարտել է խուզարկությունը:

Ոստիկանության Տարոնի բաժնի օպերլիազոր Միքայել Սարգսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 11.11.2014թ. բաժնի ղեկավարության կողմից իրեն է հանձնարարվել Վանաձոր քաղաքի բնակչութի Անի Բոշյանի բնակարանում խուզարկության կատարումը:

Նույն օրը բաժնի այլ աշխատակիցների հետ գնացել է Ա.Բոշյանի բնակարան, սակայն վերջինս տանը չի եղել: Խուզարկությունը կատարվել է ընթերակաների և Ա.Բոշյանի մոր ներկայությամբ, որի ընթացքում առգրավվել են գործի համար կարևոր նշանակություն ունեցող որոշ առարկաներ:

Նույն օրը երեկոյան, բաժնի պետի տեղակալ Թորոսյանի հանձնարարականով օպերլիհազոր Կարեն Սուլաղյանի հետ կրկին այցելել է Ա. Բոշյանի բնակության վայր վերջինիս հայտնաբերելու նպատակով: Ա.Բոշյանը գտնվել է տանը, և նրան հանցագործություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկել ոստիկանության Տարոնի բաժին:

Բերման ենթարկելուց հետո կազմել է համապատասխան փաստաթղթեր, Անի Բոշյանին պարզաբանվել են իր բերման ենթարկվածի իրավունքներն ու պարտականությունները, այնուհետև նրան որպես բերման ենթարկվածի սահմանված կարգով նկարահանել է, որի ընթացքում վերջինս հայտնել է իր տվյալները և քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնց կասկածանքով բերման է ենթարկվել, որից հետո նրան ուղեկցել է Թորոսյանի աշխատասենյակ, որտեղ իգական սերի աշխատակցուիին կատարել է Ա. Բոշյանի անձնական խուզարկությունը: Նշված գործողություններն ավարտելուց հետո Ա.Բոշյանը ներկայացվել է քննչական բաժին՝ համապատասխան գործողություններ կատարելու:

Ա.Բոշյանն իրեն պահել է շատ հանգիստ, նրա նկատմամբ որևէ չճնշում չի գործադրվել, և ոչ ոք նրան չի վիրավորել:

Նույնարդվանդակ ցուցմունք է տվել օպերլիհազոր Կարեն Սուլաղյանը:

Ոստիկանության Տարոնի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Արմեն Դերջանը ցուցմունք է տվել այն մասին, որ հանցագործության կասկածանքով բերման ենթարկված Անի Բոշյանի հետ որևէ առնչություն չի ունեցել, միայն տեղյակ է եղել, որ վերջինս կասկածվում է հանցագործության կատարման մեջ, և որ վերջինիս բնակարանում խուզարկություն է կատարվել: Օպերատիվ աշխատանքները դեկավարել են բաժնի պետի տեղակալ Վ.Թորոսյանը: Ա. Բոշյանին բերման ենթարկելու օրը վերջինիս մայրը՝ իր դասընկերուիի Բավական Խաչատրյանը, մտել է իր աշխատասենյակ և հայտնել է այդ մասին: Քանի որ քրեական գործը քննվել է քննչական վարչության վարույթում, ինքը Բ. Խաչատրյանին հայտնել է, որ գործով զբաղվում են քննիչները:

Նույն օրը ցերեկային ժամի, բաժնում նկատել է Ա.Բոշյանի հորը՝ Յակոբ Բոշյանին, սակայն տեղյակ չի եղել, թե վերջինս ինչ նպատակով է գտնվում բաժնում, նրա հետ չի խոսել և որևէ առնչություն չի ունեցել:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության պետի տեղակալ Արման Գալստյանը ցուցմունք է տվել այն մասին, որ քննչական վարչության վարույթում քննվող քրեական գործերից մեկի շրջանակներում 11.11.2014թ. ոստիկանության Տարոնի բաժնից ներկայացվել են հանցագործությունը կատարելու կասկածանքով բերման ենթարկված Անի Բոշյանն և նրա վերաբերյալ նյութերը: Այդ պահին գործը քննող քննիչ Յովսեփ Յովսեփյանը բացակայել է աշխատավայրից, և մինչև նրա ժամանելը Անի Բոշյանը մնացել է իր աշխատասենյակում: Ինքը Ա.Բոշյանից հետաքրքրվել է, թե ինչպես են պորնկագրական բնույթի լուսանկարները հայտնվել նրա համակարգչում, վերջինս էլ ներկայացրել է հանգամանքերը:

Որոշ ժամանակ անց ժամանել է քննիչը և Ա.Բոշյանին ուղեկցել է իր աշխատասենյակ: Տուն գնալուց առաջ բացել է քննիչի աշխատասենյակի դուռը և տեսնելով, որ հարցաքննությունը դեռևս շարունակվում է բարի գիշեր մաղթել և հեռացել է:

Ա.Բոշյանն իր աշխատասենյակում միայնակ է եղել, ոչ ոք ներկա չի գտնվել իրենց խոսակցությանը: Ինքը որևէ մեկի աշխատասենյակում Ա.Բոշյանին չի հանդիպել, չի համոզել, նրան չի վիրավորել և որևէ ճնշում չի գործադրել: Իր աշխատասենյակում Ա. Բոշյանը գտնվել է հանգիստ վիճակում, միայն ասել է, որ նման արարք կատարելով՝ իր ծանոթների և ընտանիքի անդամների մոտ կխայտառակվի, իսկ ինքը նրան հանգստացրել է ասելով, որ նախաքննության տվյալները գաղտնի են և չեն հրապարակվում: Ա. Բոշյանի ցուցմունքի հետ կապված՝ քննիչին ոչինչ չի ասել, հարցաքննության ընթացքում քննիչից աշխատասենյակ չի մտել և վերջինիս հետ չի գրուցել, միայն հաջորդ օրն է քննիչից տեղեկացել, որ Ա. Բոշյանը գրել է մանրակրկիտ խոստովանական ցուցմունք:

ՀՅ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության ՀԿԳ ավագ քննիչ Յովսեփ Յովսեփյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 11.11.2014թ. երբ գտնվել է աշխատավայրից դուրս, իրեն է զանգահարել վարչության պետի տեղակալ Արման Գալստյանը և ասել, որ իր վարույթում քննվող քրեական գործերից մեկի շրջանակներում հանցագործությունը կատարելու կասկածանքով անձ է բերման ենթարկվել:

Վերադառնալով աշխատավայր՝ Ա.Գալստյանի աշխատասենյակում հանդիպել է նրան և բերման ենթարկված Անի Բոշյանին, ապա վերջինիս հետ գնացել է իր աշխատասենյակ, որտեղ Ա.Բոշյանին պարզաբանել է, թե ինչում է կասկածվում, ապա նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել ստորագրություն չիեռանալու մասին, պարզաբանել կասկածյալի իրավունքներն ու պարտականությունները, և սկսվել է հարցաքննությունը: Ա.Բոշյանը մանրակրկիտ ցուցմունք է տվել կատարած հանցագործությունների մասին, ինքը վերջինիս ոչինչ չի թելադրել և չի ուղղորդել, նա իր ծեռքով շարադրել է ցուցմունքը, նշել է այնպիսի հանգամանքներ, որոնք մինչ այդ իրեն հայտնի չեն եղել, հետևաբար ինքը չեր կարող նման տեղեկություններ թելադրել: Դարցաքննության ընթացքում Անի Բոշյանը նաև իր հեռախոսով գանգել է ծնողներին, խոսել է նրանց հետ, հայտնել է, որ ամեն ինչ կարգին է, որ ծնողները չանհանգստանան:

Ա.Գալստյանը հարցաքննության ընթացքում իր աշխատասենյակ չի մտել, իրեն ոչինչ չի ասել, միայն մեկ անգամ իր աշխատասենյակի դուռը կիսարաց անելով՝ տեսել է, որ հարցաքննությունը շարունակվում է, բարի գիշեր մաղթելով՝ հեռացել է:

18.11.2014թ. Ա.Բոշյանին կրկին իրավիրել է իր աշխատավայր, որտեղ վերջինիս մեղադրանք է առաջադրել: Ա.Բոշյանն առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել, տվել է խոստովանական ցուցմունք և պնդել որպես կասկածյալ հարցաքննության ընթացքում իր տված ցուցմունքը: Ա.Բոշյանն իր աշխատասենյակում ճնշված չի եղել, իր ներկայությամբ ոչ ոք վերջինիս չի ծնշել և չի համոզել:

Իր աշխատասենյակում Ա. Բոշյանը գտնվել է հանգիստ վիճակում, միայն ասել է, որ նման արարք կատարելով՝ իր ծանոթների և ընտանիքի անդամների մոտ կխայտառակվի, իսկ ինքը նրան հանգստացրել է ասելով, որ նախաքննության տվյալները գաղտնի են և չեն հրապարակվում:

ՀՅ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության պետ Թաթուլ Շուշանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ բերման ենթարկված Անի Բոշյանն իր աշխատասենյակում չի եղել, ինքը վերջինիս ընդահանրապես չի հանդիպել և նրա հետ որևէ առնչություն չի ունեցել:

Իր ներկայությամբ ոչ ոք Ա. Բոշյանի նկատմամբ ճնշում չի գործադրել, նրան ոչինչ չի համոզել: Յետագայում տեղեկացել է, որ կասկածանքով բերման ենթարկված Անի Բոշյանը տվել է խոստովանական ցուցմունքներ:

Լրացուցիչ հարցաքննության ընթացքում Անի Բոշյանը հայտնել է, որ Թորոսյանն իրեն ուղեկցել է ոչ թե Շուշանյանի, այլ Շարմազանովի աշխատասենյակ, ինքը շփոթել է նրանց պաշտոնը և ազգանունը և նման ցուցմունք է տվել: Երբ իր վերաբերյալ քննվող քրեական գործի նյութերին ծանոթանալու նպատակով 2015թ. հունվարի վերջերին ներկայացել է քննչական վարչություն, այնտեղ հանդիպել է Շուշանյանին և հասկացել, որ ինքը նախկինում ազգանունները շփոթել է:

ՀՀ ոստիկանության Տարոնի բաժնի պետ երիկ Շարմազանովը ցուցմունք է տվել այն մասին, որ բերման ենթարկված Անի Բոշյանին իր տեղակալ Թորոսյանը իր աշխատասենյակ չի ուղեկցել: Ինքը, Թորոսյանը և Գալստյանը իր աշխատասենյակուն Անի Բոշյանի հետ չեն զրուցել, նրա նկատմամբ որևէ ճնշում չի գործադրվել:

Իր հիշելով՝ իր հանձնարարությամբ օպերլիազորներից մեկը Ա. Բոշյանին տարել է աշխատասենյակ, ինքը զրուցել է վերջինիս հետ, որից հետո նրան ներկայացրել են քննչական բաժին: Ա. Բոշյանի հետևից ծեռողով որևէ ժեստ չի կատարել, Ա. Գալստյանի հետ քավոր սանհիկական հարաբերությունների մեջ չի գտնվում:

Ոչ ոք Ա. Բոշյանին չի ճնշել և չի համոզել, որ խոստովանի հանցագործություն կատարելու հանգանանքը: Անի Բոշյանն իր ներկայությամբ չի հուզվել և ծնողին հանդիպելու ցանկություն չի հայտնել: Նույնիսկ երբ բերման ենթարկելուց հետո նրան նկարահանել են, նա եղել է հանգիստ, նույնիսկ՝ ժպիտով:

Ցուցմունքին կից Ե. Շարմազանովը ներկայացրել է Ա. Բոշյանին բերման ենթարկելուց հետո կատարված տեսագրության լազերային կրիչը:

Նախաքննության ընթացքում որպես վկա հարցաքննված Յեղինե Ավետիսյանը և Յեղինե Խառատյանը ցուցմունքներ են տվել այն մասին, որ 11.11.2014թ. ոստիկանության աշխատակիցների կողմից իրավիրվել են ոստիկանության Տարոնի բաժին և որպես ընթերականեր մասնակից են եղել մի աղջկա անձնական խուզարկության կատարմանը:

Խուզարկության ժամանակ այդ աղջիկը հանել է հագուստները, սակայն նրա մարմնի վրա որևէ արգելված իր չի հայտնաբերվել: Խուզարկության ժամանակ այդ աղջիկը լաց չի եղել, չի հուզվել: Խուզարկության ավարտից հետո իրենք ստորագրել են արձանագրությունը և դուրս են եկել:

Նախաքննության ընթացքում որպես վկա հարցաքննված Լորիս Ղազարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ փողոցում ունի փոքրիկ տաղավար, որտեղ զբաղվում է բջջային հեռախոսների և համակարգիչների վերանորոգմանը: 2014թ. նոյեմբեր ամսին, կոնկրետ օրը չի հիշել, տաղավար է մտել մի տղամարդ, ներկայացել որպես ոստիկանության բաժնի պետի տեղակալ և հետաքրքրվել մի համակարգչից, որը մոտ երկու ամիս առաջ տվել են իրեն, և ինքը հետ չի վերադարձել: Ինքը պատասխանել է, որ նման դեպք չի եղել, որից հետո այդ մարդու խնդրանքով դուրս է եկել տաղավարից և այնտեղ՝ մեկ այլ տղամարդու դեմ դիմաց ասել, որ իրեն համակարգիչ չեն տվել: Այդ տղամարդը ևս հաստատել է իր ասածը, ասել է, որ ինքը շփոթվել է, և նրանք հեռացել են:

Որպես վկա հարցաքննված Արտակ Տիգրանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ փողոցում՝ Յայկի հրապարակում, զբաղվում է համակարգիչների վերանորոգմանը և վաճառքով:

2014թ. նոյեմբեր ամսին, կոնկրետ օրը չի հիշել, երբ գտնվել է Սպիտակ քաղաքում, իրեն է զանգահարել անծանոթ մի տղամարդ և ներկայանալով որպես ոստիկանության աշխատակից հետաքրքրվել է մի համակարգչից, որը, իբրև, մոտ 2 ամիս առաջ տվել են իրեն վերանորոգելու: Ինքը ասել է, որ նման դեպք չի եղել, իրեն ոչ ոք համակարգիչ չի տվել: Ոստիկանը խնդրել է, որ ինքը վերադառնա Վանաձոր և այդ հարցը պարզաբանեն: Մոտ 30 րոպե անց վերադառնել է Վանաձոր, և ներկայացել ոստիկանության Տարոնի բաժին: Բաժնում հանդիպել է իրեն զանգողին, ում ազգանունը Թորոսյան է եղել, և մի տղամարդու, նրանց դեմ դիմաց ասել է, որ ոչ իրեն համակարգիչ չի տվել, որից հետո այդ տղամարդը, դիմելով Թորոսյանին, ներողություն է խնդրել և ասել է, որ նրան խարել է, որից հետո ինքը հեռացել է բաժնից:

Ցուցմունքերում առկա եական հակասությունները պարզելու նպատակով առերես հարցաքննություններ են կատարվել Անի Բոշյանի, Վազգեն Թորոսյանի, Անի Գաբրիելյանի, Արման Գալստյանի, Յովսեփ Յովսեփյանի, Երիկ Շարմազանովի, ինչպես նաև Յակոբ Բոշյանի, Վազգեն Թորոսյանի և Արմեն Դերջյանի միջև, որոնց ընթացքում վերջիններս պնդել են նախաքննության ընթացքում իրենց տված ցուցմունքները, տուժողի ներկայացուցիչ Արթուրի Սաքունցի կողմից առաջադրված հարցերին վկա Յ.Յովսեփյանը չի պատասխանել պատճառաբանելով, որ այդ հարցերի պատասխանները առկա են Անի Բոշյանի վերաբերյալ իր կողմից քննված քրեական գործի նյութերում, իսկ մասնակից Արթուր Սաքունցը հայտարարություն է ներկայացրել վկայի կողմից սահմանված պարտականությունները չկատարելու համար միջոցներ ծեռնակելու վերաբերյալ:

**Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ առերես հարցաքննության ընթացքում վկա Յ.Յովսեփյանը հայտնել է, որ Ա.Բոշյանը ցուցմունքներում նշել է այնպիսի մանրամասություններ նրա հետ շփված անձանց մասին, որոնք մինչ այդ գործով իրեն հայտնի չեն եղել, հետևաբար ինքը չէր կարող դրանք թելադրել: Սասնավորապես՝ նշել է նրա և Արամ Ամիրիսանյանի հարաբերությունների մասին, թե որքան ժամանակ են շփվել, երբ են գտնվել, ինչ պատճառներով, ինչ ծանապարհով է նա տեղեկացել, որ Արամը շփվում է Մաղլենայի հետ, թե Արամը ինչ բառեր էր օգտագործում Մաղլենայի հետ շփվելիս, մասնավորապես՝ այն նույն բառերը, որոնք մինչ այդ Արամն ասել է իրեն:**

Պատմել է նաև Արտյոմ Աբրահամյանի հետ շփվելու, նրա հետ գտնվելու, նրա կողմից նարինե Նավասարդյանի նկարները հավանելու և նրանցից վրեժինդիր լինելու մասին:

**Ա.Բոշյանին բերման ենթարկելու կասկածանքի բնույթը պոռնկագրական նյութեր տարածելու է եղել, այնինչ ցուցմունքում նշվել են իրենց Անի Բոշյանի արտահայտած բառերը՝ «ցենզուրայից դուրս նկարներ», եթե ինքը ցուցմունքը թելադրած լիներ, ապա կնշվեր օրենքի տառով՝ «պոռնկագրական նյութեր» բառերը:**

Լրացուցիչ հարցաքննության ընթացքում Յ.Յովսեփյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը Ա.Սաքունցի հարցերին չպատասխանելու որևէ դիտավորություն չի ունեցել: Յարցերը վերաբերել են կոնկրետ քննչական գործողության տևողությանը կամ կատարման եղանակին, այդ պատճառով չի պատասխանել հարցերին, քանի որ դրանք ներառված են եղել քրեական գործի նյութերում և շատ հնարավոր եր, որ ինքը չի հիշեր կոնկրետ հարցաքննության տևողությունը և այլ պատասխան տար, որը հետագայուն կօգտագործվեն իր դեմ:

Հ.Բոշյանի և Վ.Թորոսյանի միջև կատարված առերես հարցաքննության ընթացքում Հ.Բոշյանը հաստատել է այն հանգամանքը, որ իրականում ինքը Թորոսյանին հայտնել է, որ համակարգիչը տվել են վերանորոգման, սակայն նշել է որ դա վաղուց է եղել, համակարգիչը չի վերանորոգվել, և այն դեն են նետել: Քանի որ Թորոսյանը չի հավատացել իր հայտնածի խսկությանը, ինքն առաջարկել է գնալ և ցույց տալ, թե որտեղ է այն տվել վերանորոգման: Սակայն Վ.Թորոսյանի առաջադրած այն հարցին, որ եթե համակարգիչը դեն է նետել, ապա ինչ են նրանք միասին փնտրել խանութներում, Հ.Բոշյանը պատասխանել է, որ փնտրել են կոտրված համակարգիչը:

Դատկանշակամ է այն, որ Հ.Բոշյանը հայտնել է, որ ինքը ոստիկանության աշխատակիցներին բաժնից դուրս գալու ցանկություն չի հայտնել, քանի որ իրեն ասել էին, որ մինչև աղջիկը չներկայանա, իրեն բաց չեն թողնի, սակայն վերջինս չի հստակեցրել, թե նման պայմաններում ինչպես է ստացվել, որ առանց Անի Բոշյանի ներկայանալու ինքը հեռացել է ոստիկանությունից:

Նախարարնության ընթացքում ձեռք են բերվել Անի և Յակոբ Բոշյանների բջջային հեռախոսահամարներից 11.11.2014թ. կատարված մուտքային և ելքային հեռախոսազնգերի վերջանումները և զանգերը սպասարկած կայանների տեղակայման հասցեները, որոնց գննությամբ պարզվել է, որ երկու հեռախոսահամարների զանգերը նշված օրը սպասարկվել են Վանաձոր քաղաքում տեղակայված կայանների կողմից: Զննությամբ պարզվել է որ Յակոբ Բոշյանի բջջային հեռախոսահամարից 11.11.2014թ. ժամը 10.47-ին և 13.20-ին ելքային հեռախոսազնգեր են կատարվել Լյովա Մելիքյանի 094-08-20-05 հեռախոսահամարին, իսկ Ա.Բոշյանի հեռախոսահամարից՝ Բավական Խաչատրյանի 098-58-15-42 համարին:

Այս կապակցությամբ տուժող Անի Բոշյանը հայտնել է, որ ինքը շահագործել է երկու տարբեր հեռախոսահամարներ և իր հիշելով 11.11.2014թ. երր ինքը գտնվել է Երևանում երկու հեռախոսահամարներն էլ իր մոտ են եղել, սակայն, եթե զանգերը սպասարկվել են Վանաձոր քաղաքում տեղակայնված կայանների կողմից, հնարավոր է, որ մի հեռախոսը մնացել է տանը և շահագործվել տան անդամների կողմից:

Ա. Բոշյանի տված ցուցմունքի արժանահավատությունը գնհատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ վերջինս չի կարողացել պատասխանել այն հարցին, որ եթե հեռախոսահամարը մնացել տանը, ապա իր հեռախոսահամարից 11.11.2014թ. ժամը 14.51-ից մինչև 15.27-ը ընկած ժամանակահատվածում ում կողմից են կատարվել հեռախոսազնգերը իր ծնողի՝ Բավական Խաչատրյանի համարին, այն պարագայում, երբ նշված օրը և նշված ժամին իրենց բնակարանում խուզարկություն է կատարվել, իսկ Բ. Խաչատրյանը մասնակից է եղել խուզարկության կատարմանը:

Վանաձորի քաղաքապետարանի կոմունալ բաժնի պետ Լյովա Մելիքյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Յակոբ Բոշյանը աշխատում է վարչությունում որպես աղքատար մեքենայի վարորդ: 2014թ. աշնանը, կոնկրետ օրը չի հիշել, Հ.Բոշյանը զանգահարել է իրեն և հայտնել, որ գնում է ոստիկանություն և այդ պահին չի կարող աշխատանքի դուրս գալ, խնդրել է իրեն փոխարինել այլ աշխատակցով: Սովորաբար աղբը տեղափոխվում է առավոտյանը ժամը 06.00-ի սահմաններում, իսկ երկրորդ անգամ 11.00-ից 12.00-ի սահմաններում: Իր կարծիքով ժամը 10.47-ի զանգի դեպքում Հ. Բոշյանն իրեն հայտնել է, որ գնում է ոստիկանություն, իսկ ժամը 13.20-ի զանգի դեպքում հայտնել է, որ արդեն դուրս է եկել ոստիկանությունից:

Հ.Բոշյանը ինչպես հեռախոսագրույցների ժամանակ, այնպես էլ դրանից հետո, իրեն ոչինչ չի ասել, որ ոստիկանությունում իրեն պահել են և չեն թույլատրել դուրս գալ, միայն ասել է, որ դա կապված է աղջկա հետ, և ինքը այլևս չի հետաքրքրվել:

Երիկ Շարմազանովի կողմից ներկայացված լազերային կրիչի զննությանը պարզվել է, որ Անի Բոշյանը տեսախցիկի առջև հանգիստ վիճակում, ժամանակակի մեջ, առանց հուզվելու պատասխանել է նկարահանողի հարցերին, հայտնել իր կենսագրական տվյալները և ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որի կասկածանքով բերման է ենթարկվել:

Վերոգրյալի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ոստիկանության աշխատակցի կողմից տեսանկարահանելու եղանակով Ա.Բոշյանի նկատմամբ որևէ ճնշում չի գործադրվել, քանի որ վերջինս չի առարկել նկարահանվելուն և տեսախցիկի առկայությունից չկաշկանդվելով պատասխանել է իրեն առաջադրված հարցերին:

Ա.Բոշյանի և Ա.Գալստյանի միջև կատարված առերես հարցաքննության ժամանակ սուժողի ներկայացուցիչ Արթուր Սաքոնցը հայտարարել է, որ բերման ենթարկելու ժամերի հետ կապված ՀՀ-ի վերաբերյալ միջազգային և ազգային բազմաթիվ գեկույցներում, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան գեկույցներում, արձանագրվել է, որ ոստիկանության բաժիններում մարդկանց բերման են ենթարկում և պահում օրենքով սահմանված նորմերի խախտումներով և փաստաթղթային արձանագրումը չի համապատասխանում իրական փաստերին և հանգամանքներին, բացի այդ, նախաքննական մարմինը 11.11.2014թ. Անի Բոշյանին չի ներկայացրել այնպիսի օբյեկտիվ ապացույցներ, որը կհամոզեր Անի Բոշյանին տալ ինքնախոսութափանական ցուցմունքներ, ուստի նման պարագայում ակնհայտ է որ Ա.Բոշյանը ցուցմունք է տվել ճնշումների ազդեցության տակ:

Այնինչ Լոռու մարզի քննչական վարչությունում քննված թիվ 53100214 քրեական գործի զննությամբ պարզվել է, որ դեռևս 30.10.2014թ. քննչական վարչություն է ստացվել փորձագետի եզրակացությունը, համաձայն որի՝ Ա.Բոշյանի համակարգչում հայտնաբերվել են Նարինե Նավասարդյանի պոռնկագրական բնույթի լուսանկարները, ինչպես նաև պոռնկագրական բնույթի այն լուսանկարի բնօրինակը, որի վրա համապատասխան ծրագրով ավելացվել է Ն.Նավասարդյանի դիմանկարը: Բացի այդ, մինչև Ա.Բոշյանին բերման ենթարկելը նախաքննական մարմնին հայտնի է եղել այն հանգամանքը, որ այն «ԻՐ»/այփի/ հասցեները, որոնցով հասանելիություն է ստացվել Մառենա Սահակյանի անվամբ բացված անձնական էջին, ակտիվացվել են Ա.Բոշյանի անվամբ գրանցված 077-45-53-88 հեռախոսահամարից:

Ինչ վերաբերում է Ա.Բոշյանին բերման ենթարկելու կարգի և ժամերի արձանագրման խախտմանը, ապա նախաքննության ընթացքում այդպիսի տեղեկություններ ծեռք չեն բերվել, ավելին՝ պարզվել է, որ բերման ենթարկվելուց 2 ժամ 55 րոպե հետո սկսվել է Ա.Բոշյանի որպես կասկածյալ հարցաքննությունը, որը տևել է 3 ժամ 25 րոպե:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, կասկածյալի հարցաքննությունը կատարվում է նրան ծերբակալելուց կամ խափանման միջոց կիրառելու մասին որոշումը նրան հայտարարելուց անմիջապես հետո, ուստի նման պայմաններում քննիչը Ա. Բոշյանին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 48-րդ կետով նախատեսված գիշերային ժամերին հարցաքննելով նույնիսկ դատավարական խախտումներ բույլ չի տվել:

Այսպիսով՝ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննությամբ քննությամբ հավաքված ապացույցների հիման վրա հարկ է փաստել հետևյալը.

ՀՀ ոստիկանության Տարոնի բաժնի և ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության աշխատակիցների կողմից քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը պարզելու, ինչպես նաև նրանց արարքին հրավական գնահատական տալու համար անհրաժեշտ է գնահատել գործով ծեռք բերված ապացույցները վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և գինվորական գործերով պալատի 2005 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ հայտնած դիրքորոշման համաձայն՝ գործի ելքով շահագրգության անձի ցուցմունքները, առանց դրանք հաստատող օբյեկտիվ ապացույցների առկայության, բավարար չեն հանգելու այն համոզման, որ հանցագործության դեպքը տեղի է ունեցել:

ՀՀ Վճռաբեկ դատարանը 2014թ. հոկտեմբերի 31-ի ԵԿԴ/0252/01/13 որոշմամբ արձանագրել է, որ «...արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա/ ապացույցի աղբյուրի հատկանիշները /օրինակ՝ փորձագետի ծերնիասությունը, ցուցմունք տվյալ անձի շահագրգությունը.../...

...Անդրադառնալով՝ անմեղության կանխավարկածի սկզբունքին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ քրեական դատավարությունում կանխավարկածը օրենքով կամ նախադեպային իրավունքով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը: Մարդու անմեղությունը քրեական դատավարության կարևորագույն կանխավարկածներից է, որն ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով: Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարագոր է ապացուցված անմեղության:...

...Անմեղության կանխավարկածի սկզբունքը ենթադրում է ապացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար:...»

Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանգրել է հետևյալը. «... քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում,

«Իիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգանանք պետք է իիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացարի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած:...»

Փաստորեն ոստիկանության և քննչական վարչության աշխատակիցների կողմից Անի Բոշյանի նկատմամբ հոգեբանական ճնշումներ գործադրելու, նրա արժանապատվությունը նսեմացնելու, նրան համոզելու և ցուցմունքներ կորզելու հանգամանքները իիմնավորող միակ ապացույցը գործի ելքով շահագրգրված Անի Բոշյանի ցուցմունքն է, իսկ վերջինիս ծնողներ՝ Բավական Խաչատրյանի և Յակոբ Բոշյանի ցուցմունքները անուղղակի ապացույցներ են իիմնաված Ա.Բոշյանի պատմածի վրա:

Այսպիսով, վերլուծելով և գնահատելով սույն քրեական գործով ծեռք բերված փաստական տվյալները, միաժամանակ դրանք համադրելով ՀՀ վճռաբեկ դատարանի հիշյալ որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների հետ՝ պետք է արձանագրել, որ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության արդյունքում չի իիմնավորվել ոստիկանության և քննչական վարչության աշխատակիցների կողմից իրենց պաշտոնեական լիազորություններն անցնելու հանգամանքը, կատարվել են հնարավոր բոլոր քննչական ու դատավարական գործողությունները և սպառվել են նոր ապացույցներ ծեռք բերելու հնարավորությունները, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18 հոդվածի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության հետևությունը չի կարող իիմնավել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի: Փաստորեն Անի Բոշյանի հայտնած տեղեկությունները պաշտոնատար անձանց կողմից իրենց պաշտոնեական լիազորություններն անցնելու վերաբերյալ, իրենցից ներկայացնում են կասկածներ, որոնք կատարված նախաքննությամբ չեն փարատվել և հետևաբար պետք է մեկնաբանվեն հօգուտ ոստիկանության աշխատակիցների, որպիսի պայմաններում վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդում չի կարող իրականացվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով նախատեսված կամ պետական ծառայության դեմ ուղղված այլ հանցակազմերի բացակայության հիմքով:

Ինչ վերաբերում է Յակոբ Բոշյանին ոստիկանության բաժնում ապօրինի պահելու հանգամանքին, ապա այդ կապակցությամբ ևս բավարար ապացույցներ ծեռք չեն բերվել, ավելին պարզվել է, որ վերջինս ոստիկանությունում մնացել է իր կամքով և այնտեղից դուրս գալու ցանկություն չի հայտնել, իսկ մինչև ոստիկանություն գնալը ոստիկանության աշխատակիցներին սուտ տեղեկություններ տրամադրելով փորձել է նրանց գցել մոլորության մեջ և իր կողմից տրամադրված սուտ տեղեկությունը հաստատելու

նպատակով գնացել է ոստիկանության բաժին և սպասել քաղաքացու ժամանելուն: Հետագայում հայտնելով ծշմարտությունը դուրս է եկել ոստիկանությունից:

Ինչ վերաբերում է գործով վկա հարցաքննված Հովսեփ Հովսեփյանի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելու վերաբերյալ տուժողի ներկայացուցիչ Արթուր Սաքունցի հայտարարությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ վկա Յ. Հովսեփյանը առերես հարցաքննության ընթացքում արդեն իսկ իր ցուցմունքը պնդել է տուժողին առերես, որից հետո միայն, երբ կողմերին հնարավորություն է տրվել միմյանց հարցեր ուղղել, վկան չի պատասխանել տուժողի ներկայացուցչի հարցերին՝ պատճառաբանելով, որ դրանց պատասխանները առկա են քրեական գործում, և ինքը պարտավոր չէ իիշել և մտաբերել դրանք, ուստի նման պայմաններում վկա Յ. Հովսեփյանի արարքում բացակայում է ցուցմունք տալուց հրաժարվելու հանցակազմը, քանի որ հանցակազմի սուբյեկտիվ կողմը դրսկորվում է նրանում, որ վկան հրաժարվում է ցուցմունք տալ իրեն հայտնի հանգամանքների մասին, մինչդեռ տվյալ դեպքում վկան արդեն իսկ առերես ցուցմունք է տվել իրեն հայտնի հանգամանքների մասին և ընդամենը չմտաբերելու և սխալ տեղեկություն չհայտնելու նպատակով չի պատասխանել տուժողի ներկայացուցչի առաջադրած հարցին: Հետևաբար անհրաժեշտ է նրա նկատմանք քրեական հետապնդում չիրականացնել արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Այս պայմաններում հարկ է անդրադառնալ նաև Անի Բոշյանի արարքում սուտ մատնության հանցակազմի առկայության կամ բացակայության հարցին:

ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում հանցագործության մասին սուտ մատնություն կատարելու համար, եթե անձը գործել է գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկությունը կեղծ է: Նշված հանցակազմի օբյեկտիվ կողմը կատարվում է ուղղակի դիտավորությանք, այսինքն՝ հանցակազմի առկայությունը հիմնավորելու համար անհրաժեշտ է ապացուցել, որ անձը գործել է գիտակցաբար և հանցագործության մասին ակնհայտ սուտ հաղորդում է ներկայացրել՝ նպատակ ունենալով հասնել անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելուն:

Սույն գործով Անի Բոշյանի հաղորդման մեջ և ցուցմունքներում նկարագրված հանգամանքները չեն հիմնավորվել ապացուցելու գնահատվել են որպես կասկածներ, որոնք չեն փարատվել սույն քրեական գործի նախաքննության շրջանակներում և մեկնաբանվել են ի օգուտ պաշտոնատար անձանց: Այս պայմաններում հնարավոր չէ արձանագրել, որ Անի Բոշյանը գիտակցաբար հանցագործության մասին սուտ հաղորդում է տվել իրավապահ մարմիններին, այսինքն՝ վերջինիս արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի առկայությունը չի հիմնավորվել:

Ելնելով վերոգրյալից և դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 55-րդ հոդվածի 2-րդ մասով, 261-263-րդ հոդվածներով

## ՈՐՈՇԵՑԻ

- ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տարոնի բաժնի պետ երիկ Շարմազանովի, պետի տեղակալ Վազգեն Թորոսյանի, ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության պետի տեղակալ Արամ Գալստյանի

կողմից պաշտոնեական լիազորություններն անցնելու և ծանր հետևանք պատճառելու դեպքով, իսկ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Յովսեփ Յովսեփյանի կողմից պաշտոնեական լիազորություններն անցնելու և ցուցնունք տալուց իրաժարվելու դեպքերով նրանց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ արարքներում հանցակազմի բացակայության հիմքով և թիվ 62229814 քրեական գործով վարույթը կարճել:

2. Որոշման պատճենն ուղարկել Ա.Բոշյանին, Ա.Սաքունցին, Ե.Շարմազանովին, Վ.Թորոսյանին, Ա.Գալստյանին և Յ.Յովսեփյանին, նրանց պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը կարող են բողոքարկել վերադաս դատախազին որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոք ներկայացրած անձին: Գործով վարույթը կարճելու մասին դատախազի որոշումը դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան:
3. Որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկել նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին՝ օրինականությունը ստուգելու նպատակով:

ԴԴ հատուկ քննչական ծառայության  
հատկապես կարևոր գործերի քննիչ,  
արդարադատության կապիտան՝

Ա.Գ. Բարսեղյան